

ԱՊԱԳԻՆՅ

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1995 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 20 ՅՈՒԼԻՍ 2015
• VOL. XXXVI, NO 1995 • LUNDI, 20 JUILLET 2015 • MONDAY, JULY 20, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ՐԴ ՏԱՐԵՎԱՐԶ

ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ

Բակո Սահակեան Ելոյթ կ'ունենայ Լոնտոնի միջազգային յարաբերութիւններու թագաւորական հիմնարկին մէջ



Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան Ելոյթ ունեցած է Լոնտոնի Միջազգային յարաբերութիւններու թագաւորական հիմնարկին մէջ (Չաթըմ Հաուս): Ինչպէս «Արմենփրես»-ին կը տեղեկացնէ Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատրուութեան գլխաւոր վարչութիւնը, Յուլիս 8-ին ունեցած Ելոյթին մէջ երկրին ղեկավարը անդրադարձած է Արցախի պետականաշինութեան, ներքին եւ արտաքին քաղաքականութեան, ատրպէյճանա-դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման եւ տարածաշրջանային գործընթացներուն, ինչպէս նաեւ պատասխանած է յառաջացած հարցերուն:

Իր Ելոյթին մէջ նախագահ Սահակեան նշած է, որ Արցախին հոգեհարազատ է Չաթըմ Հաուսի կարգախօսը՝ «Օգնել՝ կառուցելու անվտանգ, բարեկեցիկ եւ արդար աշխարհի» աւելցնելով, որ այս գաղափարները առկայ են նաեւ մեր աշխարհընկալման մէջ: Նախագահին խօսքով՝ նման հանդիպումները օգտակար են թէ Արցախի, թէ տարբեր պետութիւններու եւ միջազգային կառոյցներու համար: Հանդիպման ներկայ եղած են օտարերկրեայ դիւանագետներ, գիտնականներ եւ վերլուծաբաններ:

ԻՍՐԱՅԷԼԻ ԶՆԵՍԵԹԻ ՆԱԽԱԳԱՐԸ ԿՈՉ Կ'ՈՒՂԴԵ ԾԱՆՁՆԱԼՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Իսրայելի Խորհրդարանի (Զնեսեթ) նախագահ Եուլի Էլեշթայն յանձնաժողովի մը նիստին ընթացքին յայտնեց թէ Խորհրդարանը բարոյական պարտաւորութիւն ունի ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը եւ աւելցուց թէ ինք այցելած է Հայկական յուշարձան մը, որ խոր ազդեցութիւն ունեցած է իր վրայ: Ան կոչ ուղղած է որ Խորհրդարանը այս նիւթին վերաբերեալ ժողովրդական պետութեան մը վայել պատշաճ բանաձեւ մը որդեգրէ: «Ես կը ջանամ օրակարգի անցընել այս հարցը եւ յոյս ունիմ որ Խորհրդարանի անդամները ճիշդ ձեւով կը քուէարկեն» ըսած է Խորհրդարանի նախագահը եւ բացատրած է թէ կան բազմաթիւ կառավարութիւններ, որոնք չեն ճանչցած Հայոց Ցեղասպանութիւնը, բայց անոնց Խորհրդարանները ճանչցած են զայն:



Նախագահ Սերժ Սարգսեան ընդունեց Հերպերթ Չալպերը

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան ընդունեց Հարաւային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Հերպերթ Չալպերը:

Չրուցակիցները բնարկեցին շրջանի անվտանգութեան եւ կայունութեան, դարաբաղեան հիմնախնդրի խաղաղ լուծման բանակցային հոլովոյթի ներկայ հանգրուանին, առկայ խնդիրներուն եւ լուծման հոլովոյթը յառաջ մղելու ուղղութեամբ հետագայ կարելի ջանքերուն, ինչպէս նաեւ Հայաստան-Եւրոպական Միութիւն համագործակցութեան զարգացման վերաբերող հարցեր:

Հանրապետութեան նախագահը անգամ մը եւս ընդգծեց, որ Հայաստան բարձր կը գնահատէ Եւրոպական Միութեան հաւասարակշռուած դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին վերաբերեալ, ինչպէս նաեւ խնդրի համապարփակ լուծման համար բարենպաստ մթնոլորտ ստեղծելու յանձնառութիւնը: Նախագահ Սարգսեան կա-



րելոր նկատեց 21-22 Մայիսին Ռիկայի մէջ տեղի ունեցած Արեւելեան գործընկերութեան վեհաժողովի լիակատար աջակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն՝ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման ուղղութեամբ ձեռնարկուող ջանքերուն, ներառեալ՝ այդ երկիրներու նախագահներու մակարդակով 2009 թուականէն ի վեր անոնց յայտարարութիւններուն:

Հերպերթ Չալպեր ընդգծեց, որ Ռիկայի վեհաժողովին իբրեւ հետեւանք

ընդունուած հռչակագիրին մէջ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման վերաբերեալ ձեւակերպումները, իրաւամբ, արդար էին եւ ամբողջովին համարժեք իրավիճակին:

Ան վերահաստատեց Եւրոպական Միութեան աջակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու ձեւաչափի ծիրին մէջ ընթացող բանակցութիւններուն՝ շեշտելով, որ այդ ձեւաչափի պահպանման հարցին մէջ Եւրոպական Միութեան դիրքորոշումը կը մնայ անփոփոխ:

Պելճիքայի խորհրդարանի յանձնաժողովը Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւ ընդունեց

Պելճիքայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովը Յուլիս 7-ի իր նիստին Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւ ընդունած է: Այս մասին յայտնած է «Յանուն արդարութեան եւ ժողովրդավարութեան» Եւրոպական հայկական միութիւնը: Ընդունուած է խորհրդարանական մեծամասնութեան ներկայացուցած բանաձեւը:

Զննարկումներէն ետք մեծամասնութեան անդամներու մասնակցութեամբ բանաձեւը ընդունուած է, բայց ոչ միաձայն: Ընկերվարական կուսակցութիւնը, «Մարդասիրական ժողովրդավարական կեդրոն» կուսակցութիւնը եւ «Էքոլո»-ն ձեռնպահ քուէարկած են: Ընդդիմութեան առաջարկած փոփոխութիւնները իշխող մեծամասնութիւնը մերժած է:

Յուլիս 2-ին Պելճիքայի ներկայացուցիչներու պալատին մէջ ընդդիմադիր Ընկերվարական խմբակցութիւնը եւս Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի նախագիծ մը ներկայացուցած էր: Խորհրդարանական մեծամասնութիւնը

իր նախագիծը ներկայացուցած է արտա-հերթ քննարկման, որ կը ցանկանայ, որ բանաձեւը խորհրդարանը ընդունի նախքան ամառնային արձակուրդները՝ Յուլիս 21-23-ը:

Սակայն բանաձեւի իրենց նախագիծերը ներկայացուցած են նաեւ «Մարդասիրական ժողովրդավարական կեդրոն» կուսակցութիւնը, Ընկերվարական կուսակցութիւնը եւ «Ֆլամանտական շահ» կուսակցութիւնը:

Յիշեցնենք, որ բանաձեւի նախագիծը ներկայացուած է «Ֆլամանտական նոր դաշինք» (N-VA) համաձայնական կուսակցութենէն Փեթըր տէ Ռովերը: Այդ բանաձեւին մէջ ակնարկ կայ 2015 թուականի Ապրիլ 22-ին Ֆլանտրիոյ խորհրդարանի (Պելճիքայի կազմին մէջ գտնուող-ԵՌԳ.) ընդունած Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւին, ՄԱԿ-ի 1948 թուականի համաձայնագիրին եւ Եւրոպական խորհրդարանի՝ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առիթով ընդունած բանաձեւին:

Տարեկան Արձակուրդ

Մեր տարեկան արձակուրդի առիթով՝ լոյս պիտի չտեսնեն «Ապագայ» շաբաթաթերթի Յուլիս 27-ի եւ Օգոստոս 3-ի թիւերը:

Արձակուրդի յաջորդող առաջին թիւը լոյս պիտի տեսնէ Օգոստոս 10-ին:

Խմբ.

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԿ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ



Յուլիս 8-ին Երեւանի Ամերիկեան Համալսարանին մէջ կայացաւ Ցեղասպանագետներու Միջազգային Ընկերակցութեան համաժողովը, «20-րդ դարու ցեղասպանութիւններու բաղդատական վերլուծումը»

թեմայով: Համաժողովը նուիրուած էր Ցեղասպանութեան 100-րդ, Բ. Աշխարհամարտի եւ Հրեական Հոլոքոստի 70-րդ տարեիցներուն: Կը մասնակցէին ընկերակցութեան նախագահը, եւ անւի քան հարիւր

հեղինակաւոր գիտնականներ եւ մասնագետներ աշխարհի զանազան երկիրներէ:

Բացման իր խօսքերուն մէջ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան համապարփակ կերպով անդրադարձաւ ցեղասպանական գործողութիւններու, այլատեսացութեան քարոզչութեան, զանգուածային սպանութիւններու եւ վայրագութիւններու, կրօնական, ազգային եւ լեզուական խտրականութիւններու, եւ արժեւորելով համաժողովի առաքելութիւնը եւ այն ջանքերը որոնք կը գործադրուին գիտական մակարդակի վրայ, նշած է անոնց ունեցած կարեւոր դերին՝ Հայոց Ցեղասպանութեան հարցով պատմական արդարութիւնը վերականգնելու մէջ: «Մենք կը պայքարինք հայ ժողովուրդի իրաւունքները վերականգնելու համար եւ շնորհակալ ենք բոլոր անոնց, որոնք կը սատարեն մեզի մեր պայքարին մէջ» ըսաւ նախագահ Սարգսեան, գնահատելով բոլոր մասնակիցներու աջակցութիւնն ու ցուցաբերուած խիզախութիւնը:

ԵՐՈՍԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ՏՐԱՄԱԴՐԵ ՎԵՑ ՄԻԼԻՈՆ ԵՈՒՐՕ



Եւրոպական Հարեւանութեան շրջագծին մէջ, ԵՄ-ը Հայաստանի կը տրամադրէ վեց միլիոն Եւրօ, Հայաստանի գիւղատնտեսութեան զարգացման ծրագրի շարունակութեան համար: Անցեալին կատարուած օժանդակութեան դրական արդիւնքին ի հետեւանք, այժմ կը թեւակոխուի Հայաստանի գիւղատնտեսութեան համապարփակ զարգացման երկրորդ կիսափուլը որ կ'ընդգրկէ 2015-2025 տասնամեակը:

ԱՄՆ-ՈՒ ԱՐԳԱԽԻՆ ՈՒՂՂԱԿԻ ԱՋԱԿԳՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԿԻ

Միացեալ Նահանգներու Ծերակոյտի Յատկացումներու յանձնաժողովը 9 Յուլիսին յայտարարեց թէ պիտի շարունակէ ուղղակի Արցախի քաղաքացիներուն տրուող մարդասիրական օժանդակութիւնը: 1998էն ի վեր տրուող այս տարեկան աջակցութիւնը կը վայելէ յանձնաժողովի թէ հանրապետական եւ թէ դեմոկրատ անդամներուն հաւանութիւնը:

Յանձնաժողովի որդեգրած զեկոյցը, որ կցուած է 2016ի պետական-արտաքին յատկացումներու օրինագիծին, կ'ընդգծէ հետեւեալը. «Յանձնաժողովը կը յանձնարարէ օգնութիւն տալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան զոհերուն, այն չափով, որ կը համապատասխանէ անցեալ տարիներու օժանդակութեան:

Յանձնաժողովը նաեւ իր զօրակցութիւնը կը յայտնէ հակամարտութեան խաղաղ լուծման ուղղութեամբ տարուող ճիգերուն:»

Յանձնաժողովը յանձնարարած է Հայաստանին յատկացնել 20.06 միլիոն տոլարի տնտեսական օգնութիւն, 1.7 միլիոն տոլարի սպառազինութեան աջակցութիւն, եւ 600 հազար տոլար ռազմական կրթութեան ծրագիրներու համար: Ատրպեյճանին համար յանձնարարուած գումարը 8.778 միլիոն տոլար է, իսկ Վրաստանինը՝ 54 միլիոն տոլար:

Յանձնաժողովը իր մտահոգութիւնը յայտնած է Ատրպեյճանի մէջ մարդկային իրաւանց խախտումներուն վերաբերեալ:

ՍԿՍԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՄԱԽՈՅՈՒՄԻ (COALITION) ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Թուրքիոյ մէջ Յունիս 7-ի ընտրութիւններէն 32 օր ետք, նախագահ Թայիպ Էրտողան պաշտօն յանձնեց Վարչապետ Ահմէդ Տաւուտօղլուի, որ սկսի խորհրդակցութիւններ միւս երեք կուսակցութիւններուն հետ, կազմելու համար համախոհական 63-րդ կառավարութիւնը: Տաւուտօղլու առանձին հանդիպումներ պիտի ունենայ երեք կուսակցութիւններու ղեկավարներուն հետ: Նոյնպէս սկսած է նոր նախարարութեան խորհուրդի կազմութեան աշխատանքը:

Եթէ Տաւուտօղլու չյաջողի տրուած ժամանակամիջոցին կազմելու նոր կառավարութիւնը, նախագահ Էրտողան այդ գործը պիտի յանձնէ ընդդիմադիր ՃՀԳ կուսակցութեան ղեկավար Քեմալ Զըլըճ-տարօղլուին: Տաւուտօղլու կոչ ուղղած է որ յարգալից ոճով շինիչ եւ թափանցիկ աշխատանք տանին, այլապէս միակ այլընտրանքը պիտի ըլլայ նոր ընտրութիւններ կատարել երկրի տարածքին:

Արտերկիրէն ժամանած 12 հայ ընտանիք կը ցանկանայ բնակիլ Արցախ



Ռուսիայէն եւ Ուքրանիայէն Արցախ ժամանած մօտ 12 ընտանիքներ ցանկութիւն յայտնած են մշտական բնակութիւն հաստատելու Արցախի մէջ: Ընտանիքները այս օրերուն իրենց հանգիստը կ'անցնեն հայրենի բնակավայրին մէջ, կը գրէ «Արցախփրէս»-ը:

Սօս մէկ ամիս առաջ «Արցախ» հայրենակցական միութիւնը կոչ ըրած է աշխարհի բոլոր հայերուն, եւ յատկապէս ծագումով դարաբաղցիներուն, որոնք կ'ապրին արտասահման, պարբերաբար այցելել հայրենի երկրամաս եւ ամէն տարի իրենց ընտանեկան արձակուրդի գոնէ մէկ շաբաթը անցնել Ղարաբաղի մէջ:

«Ամէն օր դրսից ընտանիքներ են ժամանում Արցախ, նախաձեռնութեան օրուանից մօտաւոր հաշուարկներով հինգ հարիւրից անւի ընտանիք է վերադարձել ու իր հանգիստը կազմակերպում է իրենց տներում: Նրանք Արցախից տարբեր ժամանակներում գնացած մարդիկ են, ովքեր այնտեղ բարեկամներ ունեն, դատարկ տներ», -

Շար. էջ 11

ԱՊԱԳԱՅ
Շաբաթաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékeyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

**Պատասխանատու խմբագիր՝
ԱԼԵՏԻՍ ՊԼԳԳԱԼԵԱՆ**

**Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒՐԵԱՆ**

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”

Canada

Նախագահ Սարգսյան այցելեց Հայաստանի Ամերիկեան Համալսարան



Նախագահ Սերժ Սարգսյան Չորեքշաբթի՝ 8 Յուլիս 2015-ին, այցելեց Հայաստանի ամերիկեան համալսարանը, ուր ծանօթացաւ ընթացիկ գործունէութեան, ուսման պայմաններուն եւ ծրագիրներուն:

Նախագահ Սարգսյան այցելեց համալսարանի գրադարանը, որ կը սպասարկէ ոչ միայն համալսարանի ուսանողներուն եւ դասախօսական անձնակազմին, այլ բաց է նաեւ հանրութեան համար:

Սարգսյան նաեւ զրուցեց աշխատակիցներուն հետ, հետաքրքրուեցաւ անոնց կողմէ իրականացուող աշխատանքներով եւ մաղթեց յաջողութիւններ:

Ռուս գործարար. «Եկե՛ք ԼՂ՝ հասկանալու համար, թէ ինչի մասին կը խօսիմ. սա բացառիկ վայր է աշխարհի վրայ»

Ռուս յայտնի մեծահարուստ, գործարար Գերման Ստերիգովը ռուսական PEH TB ալիքին տուած բացառիկ հարցազրոյցի մը ընթացքին բացայայտած է Լեռնային Ղարաբաղ տեղափոխուելու անսպասելի որոշումը:

«Ես կը պատմեմ պարզ, հասարակ ճշմարտութիւն, որ կրնայ շատերուն հաճելի չթուիլ, սակայն ատիկա լաւագոյնն է այն յօրինուածքներէն, որոնք այժմ կը պատմեն իմ եւ իմ ընտանիքի մասին», - ըսած է գործարարը:

Անոր խօսքով՝ Լեռնային Ղարաբաղը սքանչելի երկիր է՝ իր հրաշալի ժողովուրդով: Եւ երջանիկ են այն հայերը, որոնք ունին նման հայրենիք, նման պատմութիւն եւ գեղեցկութիւն:

«Ես շրջագայած եմ ամբողջ աշխարհով եւ ոչ մէկ տեղ նման վայր տեսած եմ: Նման գեղեցկութիւն, նման պտղաբերութիւն եւ, ամենակարեւորը, նման յարաբերութիւններ մարդոց միջեւ: Այստեղ ընդհանրապէս թշնամանքը զերոյական մակարդակի վրայ է», - պատմած է Ստերիգովը:

Միեւնոյն ժամանակ ռուս գործարարը դիմած է Ռուս քաղաքացիներուն՝ նշելով, որ անոնց դժուար պիտի ըլլայ բացատրել ինչպէս մարդիկ հրաշալի կը վերաբերին իրարու հետ: Ատոր համար պէտք է ըլլալ այդ երկրին մէջ:

«Ես երջանիկ եմ, որ այստեղ բերած եմ իմ երեխաներս, քանի որ ես անոնց կը պատմեի՝ ինչպէս մարդիկ պէտք է տեսականօրէն իրարու



հետ վարուին, քանի որ իրապէս ժամանակակից Ռուսիոյ նման վերաբերմունք, ցաւօք, չկայ: Իսկ Լեռնային Ղարաբաղի մէջ անիկա կայ: Այստեղ անոնք ատիկա կը տեսնեն: Եւ ատիկա չափազանց օգտակար դաս է անոնց համար», - ըսած է Ստերիգովը:

Իր անկեղծ խօսքի վերջաւորութեան գործարարը եւս մէկ անգամ ընդգծած է՝ որքան առանձնատուկ կը համարէ այն վայրը, ուր այժմ կը գտնուի:

«Եկե՛ք Լեռնային Ղարաբաղ՝ հասկնալու համար, թէ ինչի մասին կը խօսիմ: Ասիկա բացառիկ վայր է աշխարհի վրայ: Ան մարդկային հնագոյն յարաբերութիւններու օրրան է, որ պահպանած է հայ ժողովուրդը», - նշած է Ստերիգովը:

Ռուսական վարկով Հայաստան ձեռք պիտի բերէ նաեւ հեռահար սպառազինութիւն

Պաշտպանութեան նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Յովհաննիսեան Չորեքշաբթի՝ 8 Յուլիս 2015-ին, «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին փոխանցեց, որ Ռուսիոյ յատկացուցած 200 միլիոն տոլար վարկով Հայաստան այդ երկրէն ձեռք պիտի բերէ նաեւ հեռահար սպառազինութիւն:

Յովհաննիսեան ո՛չ հաստատեց, ո՛չ ալ հերքեց յայտնուած տեղեկատրուութիւնը, թէ Հայաստան Ռուսիայէն պիտի գնէ «Իսկանտեր-Մ» հրթիռային համալիրներ: «Ձեռք է բերուելու նորագոյն զինտեխնիկայ, սպառազինութիւն՝ եւ՛ յարձակողական, եւ՛ պաշտպանական բնոյթի, ինչպէս նաեւ նոր սարքաւորումներ: Ընդհանրապէս բանակի վերազինման լայնածաւալ ծրագրի շրջանակներում է այս ամէնը», - ըսած է Արծրուն Յովհաննիսեան:

Յատկանշական է, որ Հայաստանի խորհրդարանի կողմէ վարկային այդ պայմանագրի վաւերացման օրը՝ Յուլիս 2-ին, ռուսաստանեան TACC լրատուական գործակալութիւնը, յղում կատարելով Ռուսիոյ ռազմատեխնիկական համագործակցութեան բնագաւառի անանուն աղբիւրին, գրած է, որ Մոսկուան երեւանի հետ բանակցութիւններ կը վարէ «Իսկանտեր-Մ» տեսակի հրթիռային համալիրներ մատակարարելու շուրջ:

Արծրուն Յովհաննիսեան այս առնչութեամբ ըսաւ. - «Կոնկրետ (յստակ-ԵՌԳ.) ոչ մի բան չեմ կարող ասել: Ռուսական կողմի հետ քննարկում են տարբեր տեսակի յարձակողական՝ այդ թւում հեռահար սպառազինութեան ձեռք բերման հարցեր»:

Ռուսական լրատումիչօցներու փոխանցմամբ, «Իսկանտեր» հրթիռային համալիրները ունին քանի մը տեսակներ, եւ «Իսկանտեր-Մ»-ը, որուն հեռահարութիւնը կը հասնի մինչեւ 500 քմ., նախագծուած եղած է ռուսական զինուած ուժերուն համար:

Եթէ գործարքը պաշտօնապէս հաստատուի, Հայաստան Ռուսիայէն ետք կը դառնայ երկրորդ երկիրը, որ պիտի ունենայ «Իսկանտեր»



հրթիռային համալիրներ:

Հարցումին՝ ռուսական այս վարկի միջոցով ձեռք բերուող սպառազինութիւնը նոր է հայաստանեան զինուած ուժերուն համար, Պաշտպանութեան նախարարի խօսնակը արձագանգեց. - «Ձեռք բերուած սպառազինութեան տեսակներու մէջ կան եւ սպառազինութիւններ, որոնք նորագոյն են, բայց մենք արդէն ունենք, ուղղակի քանակը կ'աւելացուի: Կան սպառազինութիւնները, որոնք մինչեւ այդ մենք չենք ունեցել»:

Բանակի յետագայ վերազինման ու արդիականացման վերաբերող հարցին Արծրուն Յովհաննիսեան պատասխանած է. - «Չինուած ուժերը մինչեւ այդ 200 միլիոնն էլ սպառազինում էր եւ շարունակելու է սպառազինուել: Միայն այդ վարկով չէ, որ բանակի սպառազինման ծրագիրն իրականացում է»:

Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւններու հայկական կեդրոնի ղեկավար Մանուէլ Սարգսյան «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին ուշադրութիւն հրաւիրեց այն հանգամանքին, որ հայ-ռուսական ռազմական պայմանաւորուածութիւնը կայացաւ երեւանեան ցոյցերու ֆոնին. - «Քաղաքական ինչ-որ ժեստ էր: Եւ այդ քաղաքական ժեստը, կարծես թէ, բաւականին լուրջ ընդունուեց բոլորի կողմից: Խնդիրը այդ գումարը չէր, դա մեծ գումար չէ ժամանակակից զենքերը գնելու համար: Արուեց ժեստ, որ Ռուսաստանը կարող է Հայաստանին գումարներ տալ նորագոյն զենքեր գնելու համար»:

Երեւանի Մէջ ՀՐԱՆԴ ՏԻՆՔ Օրաթօրիոյ Առաջին Ունկնդրութիւն

Թուրքիոյ մէջ փոփ երաժշտութեան նուիրած բազմաթիւ համբաւաւոր երգերու հեղինակ Մաժակ Թօշիկեան, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեանի հրաւերով, 24 Սեպտեմբեր 2015-ին Երեւանի Արամ Խաչատուրեան համերգասրահին մէջ, ամբողջովին իր գործերէն բաղկացած երգացանկով մը իր հայրենակիցներուն պիտի ներկայանայ:



Երգչախումբը եւ սենֆոնիք նուագախումբը պիտի ղեկավարէ Յակոբ Մամիկոնեան: Համերգի առաջին մասին մէջ բաժին պիտի ունենան Պարթև Կարեան, Սիպիլ Փէթրոսօզլու, Լիտա Քօստօզլու եւ Պոլոյն Լուսաւորիչ Երգչախումբը:

Երկրորդ բաժինը յատկացուած է նորաստեղծ ՀՐԱՆԴ ՏԻՆՔ օրաթօրիոյին, բանաստեղծութիւն Պերճուհի Պերպերեանի եւ որուն առաջին
Շար. Էջ 13

Ս. Երրորդութիւն Զայց. Առաք. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի ամառային հանդէս

Ս. Երրորդութիւն Զայց. Առաք. Եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանի ամառային հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 28, 2015-ին եկեղեցւոյ «Մակարոս Արթինեան» ներքնասրահին մէջ, աւարտ Ս. Պատարագի: Ներկայ էին եկեղեցւոյ Զոգեւոր Զովի՛ Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ Զարգարեան, վարժարանիս նախկին տնօրէնուհիներ Տիկ. Սիրվարդ Միքայէլեան եւ Տիկ. Սեդա Գանտահարեան, Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ վարժարանի Տնօրէնուհի Դոկտ. Արփի Փանոսեան-Մըթարը, Թէքէեան Մշակութային Միութեան Ատենապետ տիար Գեորգ Թիւթիւնճեան, պատուական հիւրեր, նուիրատուներ եւ ծնողներ:



Հանդիսութիւնը սկսաւ վարժարանիս ուսուցչուհիներէն Տիկ. Զոհիսիմէ Սիմոնեանի բացման խօսքով, վարժարանիս աշակերտութիւնը խմբերգեց «Տէրունական Աղօթքը» վարժարանիս քայլերգը եւ աղօթքը: Որմէ ետք սկսաւ վարժարանիս գեղարուեստական յայտագիրը: Այս տարուայ նիւթ ունենալով «Աստուծոյ Գոհաբանութեան Փառաբանութեան եւ Յիսուսի եօթը «ես եմ» խօսքերուն մասին:



Զանազան կարգերու աշակերտները ներկայացուցին սաղմոսներ թիւ՝ 8, 18, 89, աղօթքներ, «Առակաց» համարէն մասեր «Տիրոջ Գոհութեան Օրէնքին եւ հաւատարմութեան» պարբերութիւններ: Մեր աշակերտները դաշնակի վրայ նուագեցին ճոխացնելով մթնոլորտը: Բոլորը բծախնդրօրէն պատրաստուած ներկայացուցին իրենց հատորները:

Ապրիլի մեր աշակերտները եւ անշուշտ մեծ գնահատանքը կ'երթայ իրենց ծնողներուն որոնք ամենայն զոհողութեամբ եւ ճիգով բերին իրենց զաւակները կիրակնօրեայ վարժարան ունենալու կրօնական, հայկական եւ հաւատքի դաստիարակութիւն:

Բեմ հրաւիրուեցաւ Տէր Զարեհ յանձնելու վկայականները մեր աշակերտներուն

Արթիւր Թահմազեան, Մասիս Միրզոյեան... որմէ ետք իր սրտի խօսքն ու մաղթանքները փոխանցեց, շնորհաւորեց տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը, օգնականները եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Տնօրէնուհի Տիկ. Սօսի Պարոնեան կարդաց տարուայ գործունէութեան տեղեկագիրը վերջիջելով նաեւ Տոպլիսի Ս. Զոհիսիմէ Առաքելական կիրակնօրեայ վարժարանիս աջակցութեան շնորհակալագիրը, նաեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց որոնք բարձր նկատած են կիրակնօրեայ վարժարանը եւ մասնակցութիւնը բերած են թէ նիւթական եւ թէ աշխատանքով:

Վարձքերնին կատար...

Շնորհիւ մեր նուիրատուներուն մրցանակներ բաշխուեցաւ լաւագոյն եւ տիպար աշակերտներուն: «Ճաշու Գիրք» կարդացողներուն տրուեցաւ խաչեր, օգնականներուն գնահատանքի յուշանուէրներ ինչպէս նաեւ մեր շատ նուիրեալ ուսուցչուհիներուն:

Մեր նուիրեալ ուսուցչուհիներուն եւ ծնողներուն կողմէ ներկաները հիւրասիրուեցան սուրճով եւ անուշեղէններով:

Բոլոր ծնողները ու ներկաները ուրախ եւ հպարտանքով հրաժեշտ տուին ուսուցչուհիներուն բարձր գնահատելով անոնց անխնայ աշխատանքին, որոնք մեծ նուիրումով եւ Աստուածապարգէւ ծառայութեամբ եւ հոգատարութեամբ կրօնական դաստիարակութիւն կը սերմանեն իրենց մանուկներուն հոգիներուն մէջ:

Վարձքերնին կատար բոլորին.

Բարի արձակուրդ վերամուտին տեսնելու յոյսով:

Տնօրէնուհի ՍՕՍԻ ՊԱՐՈՆԵԱՆ

Նախարար Յակոբեան ընդունեց Ռազմիկ Փանոսեանը

Յունիս 7-ին ԶԶ սփիւռքի նախարար Զրանոյշ Յակոբեանը ընդունեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի հայ համայնքներու բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանը:



Զրոյցի ընթացքին նախարարը հիւրին տեղեկացուց վերջերս Ֆրանսայի Ալֆորվիլ քաղաքին մէջ բացուած հայկական վարժարանի մասին, որուն ներկայ էին Զայաստանի եւ Ֆրանսայի վարչապետներ Յովիկ Աբրահամեանը եւ Մանւել Վալսը, Ֆրանսայի ԱԺ նախագահ Գլոտ Պարտոլոնը, խորհրդարանի պատգամաւորներ, նախարարներ Զայաստանէն, երկու երկիրներու դեսպանները, Ալֆորվիլի քաղաքապետը, ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչներ, սրբազան հայրեր:

Ռազմիկ Փանոսեան, կարելոր նկատելով Սփիւռքի մէջ նոր դպրոցներու ստեղծումը, նշեց, որ մեծապէս հետաքրքրուած է հայ մանուկներու եւ երիտասարդներու կրթութեան հարցերով եւ այդ նպատակով մասնակցած է Երեւանի ԹՈՒՄՕ ստեղծարար ճարտարագիտութիւններու կեդրոնին մէջ տեղի ունեցած տեղեկատուական ճարտարագիտութեան հիմնախնդիրներուն նուիրուած գիտաժողովին, որուն ներկայ էին հայոց լեզուի եւ տեղեկատուական ճարտարագիտութեան մասնագետներ: Քննարկման գլխաւոր թեման կ'առնէր հայոց լեզուին, մասնաւորապէս արեւմտահայերէնի ուսուցումը տեղեկատուական միջոցներու կիրառմամբ: Ան նշեց, որ գիտաժողովի ընթացքին քննարկուած է արեւմտահայերէն գրագրութեան ծրագիր ստեղծելու գաղափարը:

Նախարարը հիւրին ներկայացուց նաեւ Սփիւռքի նախարարութեան կողմէ իրականացուող «Ամառնային դպրոց», «Արի տուն», ինչպէս նաեւ արեւմտահայերէնէն արեւելահայերէն եւ հակառակը փոխարկիչ ծրագիրները (www.translator.am, ISMA լեզուային ծառայութիւններու համացանցային ծրագիր), որոնց նպատակը սփիւռքահայութեան համար հայոց լեզուի ուսուցման ու հայրենաճանաչութեան ապահովումն է:

Երկուստեք շեշտուեցաւ, որ ուժացման վտանգին դիմակայելու համար անհրաժեշտ է կիրառել ժամանակակից հնարաւորութիւններ եւ ճարտարագիտութիւններ, որոնք ընկալելի եւ ընդունելի կ'ըլլան նոր սերունդին համար:

Քննարկուեցաւ նաեւ Զայաստանի համալսարաններէն ներս սփիւռքագիտութեամբ զբաղող ուսանողներուն համար կրթաթոշակ հիմնելու եւ անոնց ուսումը աւելի արդիւնաւետ դարձնելու հնարաւորութիւնները:

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԵՆ

ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏՈՒՆԸ

ՅԱԿՈԲ ՎԱՐԳԻՎԱՌԵԱՆ

Եզակի նախաձեռնություն մը Յեղասպանության դարադարձի այս օրերուն, այս անգամ կուգայ Յայ Աւետարանական համայնքէն: Անոր զաւակները եւս անմասն չմնացին Մեծ Եղեռնի սարսափի օրերու արհաւիրքէն երբ անոնցմէ շատեր նահատակուեցան ու մնացեալ քչուեցան դէպի անծանօթ հորիզոններ ու անապատներ:



Ամերիկայի Յայ Աւետարանական Միութիւնը (ԱՅԱՄ - AMAA) վերջերս ունեցաւ իր նոր տնօրէնը յանձնիս Չաւեն Խանճեանի: Ան հայաշունչ ու հայատրոփ մաքուր այն հասարակական գործիչն է, որ արդէն կը ցուցաբերէ ազգային նոր ոգի մը այս հաստատութենէն ներս: Ան սիրուեցաւ առաջին պահէն Մեծագոյն Նիւ Եորքի ազգայիններէն ու կազմակերպութիւններէն: Ու ասոր ալ ապացոյցը կը կազմէ այս դասախօսութիւն-գրքի շնորհահանդէսը նուիրուած Իսթանպուլի Պատանեկան Տան, որ անցնող ամիսներուն առատ նիւթ հայթայթեց հայ թէ օտար մամուլին երբ երիտասարդներ կը մնային պահանջատէրը աւելի ծանօթ՝ «Արմէն Ճամբար»ին:

Յունիս 12, 2015, Ուրբաթ երեկոյեան, Փարամըսի (Նիւ Եորքի) Յայ Աւետարանական (Փրեսփիթերիզը) եկեղեցին լեցուցած էին մեծ թիւով հայորդիներ, որքա՛ն աւետարանական համայնքէն նոյնքան եւ աւելին ընդհանրապէս ազգասէր հասարակութենէն՝ եկած մինչեւ Նիւ Եորքի ու Փենսիլվանիայի հեռավոր աւաններէն: Ներկաներուն համար, այս եկեղեցին ներս նման ազգային քաղաքական պարունակով իրապարակային հանդիսութիւն մը, անկասկած, արժանա-



ցաւ բոլորին անվերապահ գնահատանքին ու հիացմունքին:

Հանդիսավարն էր փաստաբան Փիթըր Ղուկասեան, որ ԱՅԱՄի Տնօրէն Խորհուրդին անդամ է: Ան արժեւորեց այս ձեռնարկը եւ հանգամանօրէն այնուհետեւ ընթացք տուաւ յայտագրին: Ըսենք որ այս պատանեկան կեդրոնը կը պատկանի Պոլսոյ հայ աւետարանական համայնքին: Հրանդ Կիւզելեան եղած է անոր հիմնադիրը եւ հայկական գաւառները այցելելով կատարած է շնորհալի աշխատանք ի մի հաւաքելով հայու բեկորները ու բերելով զանոնք այս պատանեկան հաստատութենէն ներս, խնամած, ազգային ու քրիստոնեական կրթութիւն տուած, տոհմային դաստիարակութիւն ու հպարտութիւն ջամբած ու վերադարձուցած գիրենք իրենց ծննդավայրերը: Այս սքանչելի իրագործման նշումն էր որ կը կատարուէր այդ երեկոյ: Առաքելական ու նուիրական աշխատանք մը, անկասկած: Ու այս տունէն անցած է ի՛նքը՝ Հրանդ Տիկաբ: Եկեղեցւոյ սրահին մէջ ներկայ էր Չաքար Տիկաբ, որ իր կարգին ապաստարան էր գտած Հրանդ Կիւզելեանի մօտ: Այս բոլորը կենդանի վկայութիւններն էին մեծ հայուն ու մարդասերին՝ Կիւզելեանին՝

Չաւեն Խանճեան արժեւորեց կատարուած մարդասիրական, բայց հայկական իրաւունքի հեռանկարներով, այս աշխատանքը: Ինքնավստահ ան յայտարարեց որ այսօրուան պահանջատիրութիւնը վերատիրանալու պատանեկան

այս տան կը մտի մեր արդար իրաւունքներու այն համազգային եւ համընդհանուր ծրագրին որ Յեղասպանութեան դարադարձին կը կատարեն մեր ազգային մնացեալ բոլոր հաստատութիւնները:

Վերապատուելի Պերճ Կիւլլեյեան, բնիկ Չաւիլէն (Լիբանան) որ հովիւն է եկեղեցւոյ, իր կարգին անդրադարձաւ այս գրքին հրատարակութեան կարեւորութեան՝ տարածելու զայն մեր համայնքէն ներս: Ձեռով մը այս ցոյց պիտի տայ մեր արդար իրաւունքներուն մաս կազմած այն ցանկին, որ շուտով պիտի ընդարձակուի եւ հանրութեան մատչելի դառնայ: Այս գիրքին թարգմանութիւնը կատարած է Երուանդ Գօջունեան իսկ մեկենասութիւնը՝ Տոթթ. Վիգէն եւ Սօսի Ահարոնեան եւ Տոթթ. Ստեփան եւ Ճիւլի Ահարոնեան ամուրը զայն նուիրելով՝ իրենց հօր՝ Վերապատուելի Յովհաննէս Ահարոնեանի՝ եղբայրը Մեծ Երազի ճամբուն ուղեւորին՝ Գերսամ Ահարոնեանի:

Երրորդ խօսք առնողը եղաւ Ռաթկըրզ Համալսարանի (Նիւ Եորքի) Յեղասպանութեան յայտագիրը համադրող Խաչիկ Մուրատեան: Ան տեսաբերիզի վրայ ցոյց տուաւ բռնագրաւուած մեր հողերուն վրայ ապրող հայու բեկորներուն կեանքը, որոնք կը շարունակեն ընդունիլ իրենց տոհմային ինքնութիւնը: Խաչիկին դէպի պատմական Յայաստան այցելութիւններուն մաս կը կազմեն հանդիպումները այն ափ մը հայերուն, որոնք թերեւս իսլամացած կը շարունակեն պահել այդ հողերուն որպէս իրաւատերը: Յուզիչ պատկերներ, որոնք, վստահաբար, այնուհետեւ պիտի շարունակեն ի յայտ գալ զանազան ուխտագնացութիւններու ընթացքին, որոնք այս ափերուն վրայ սկսան նախաձեռնուիլ Առաջնորդ Խաժակ Արք. Պարսամեանի կողմ մօտ հնգամեակ մը առաջ, երբ Ամերիկայի Յայոց Առաջնորդութիւնը յանդգնութիւնը ունեցաւ կազմակերպելու առաջին պաշտօնական ուխտագնացութիւն մը դէպի Պատմական ու Յաւերական Յայաստան, դէպի բռնագրաւուած մեր հայրենիքը:

Միայն կ'արժէ շնորհաւորել Ամերիկայի Յայ Աւետարանական Ընկերութեան այս նախաձեռնութիւնը եւ յայտնել շնորհակալութիւն Չաւեն Խանճեանին:

Տրամադրուած գիրքերէն օրինակներ ներկաներէն շատեր գնեցին եւ ճոխ հիւրասիրութեան առիթ ներկաները առիթ ունեցան մօտէն ճանչնալու յայտագրին մաս կազմող բանախօսներուն:

Քննարկուած են Բրիտանահայ համայնքի ու Արցախի միջեւ կապերու զարգացման առնչուող հարցեր


Յուլիս 6-ին Արցախի Հանրապետութեան պատուիրակութիւնը՝ նախագահ Բակօ Սահակեանի գլխավորութեամբ, աշխատանքային այցով մեկնած է Մեծ Բրիտանիա:

Յուլիս 7-ին նախագահ Սահակեան Մեծ Բրիտանիոյ մայրաքաղաքին մէջ հանդիպում ունեցած է Յայ Համայնքային Խորհուրդի անդամներուն հետ եւ քննարկած տեղի հայ համայնքի ու Արցախի միջեւ կապե-

րու զարգացման առնչուող հարցեր: Այս մասին կը յայտնեն Արցախի հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխավոր վարչուհիներէն:

Նոյն օրը երկրի ղեկավարը Լոնտոնի Սք. Եղիշէ եկեղեցւոյ մէջ հանդիպում ունեցած է քրիտանահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

Ձերմ եւ անմիջական մթնոլորտի մէջ երկրի ղեկավարը տեղեկութիւն-



ներ հաղորդած է Արցախի կեանքի, ձեռքբերումներու եւ առկայ խնդիրներու մասին, նոյնպէս պատասխանած է յառաջացած հարցերուն:

Բակօ Սահակեանի խօսքով՝ Մեծ Բրիտանիոյ հայկական համայնքը աշխոյժ դերակատարութիւն ունի թէ՛ Միացեալ Թագաւորութեան, թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ պատմական հայրենիքի կեանքին մէջ: Նախագահը երախտագիտութիւն յայտնած է համայնքի ներկայացուցիչներուն

հայրենասիրութեան եւ հարազատ ժողովուրդին նուիրուածութեան համար:

Հանդիպման մասնակցած են մեծ Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իռլանտայի Միացեալ Թագաւորութեան մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Սարգսեան, Յայ Առաքելական եկեղեցւոյ Մեծ Բրիտանիոյ թեմի առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոս Մանուկեան, պաշտօնատար այլ անձիք:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԻՐԵՆ ՆԵՐՍ

Արարատ Բնակարաններ-ն ալ կը մասնակցին «Ընդդէմ Ցեղասպանութեանց» քայլարշաւին

ՀԲԸՄի տրամադրած հսկայ ինքնաշարժը պատրաստ է իր անկէլաթոռներով: Մենք քալող երեցներս ալ Արարատի շապիկները հագած նոյնպէս պատրաստ ենք: Մաս մը պիտի քալեն, մաս մըն ալ անկէլաթոռներու վրայ նստած պիտի հետեւինք քայլարշաւին, հազարաւոր ժողովուրդին: Բայց ո՞վ են մեզ վարողները, անկէլաթոռները քշողները եթէ ոչ Նոր Սերունդ Հայ Տունի (ՆՍՏ) աղջիկ տղայ կտրիճները:

տենք հօրը ուսերուն վրայ հպարտօրէն թառած երախան. *ես պապա ունիմ* կ'ըսէ ան: Օտար մամուլի նկարահաններ ու տեղեկագրողներ կը մօտենան, կը հարցնեն տարիք ու ծննդավայր, նաեւ օրուան զգացումներ:

Պիտի սկսինք քալելու: Մեր առաջնորդը իւրաքանչիւրիս կը բաժնէ ցուցատախտակներ. մեր Անմոռուկը այնքան գեղեցիկ է որ ծանրութիւնն անգամ չենք զգար:



Հասանք հաւաքավայր. ժողովուրդը կը սքանչանայ մեր վրայ իբր քաջասիրտ, գգուանքով կը մօտենան, կը նկարեն, օրուան հերոսներն ենք, հարիւրամեակն է ուր ներկայ ենք, թերեւս վերջին Ապրիլ 24ը, մինչեւ վերջին շունչը պիտի յարգենք մեր սիրեցեալներուն յիշատակը ուր որ ալ ըլլանք: Բախտաւոր ենք այս օրուան արժանանալու, նայուածքով մ'իսկ իրարու սիրտ կը կարդանք: Ուրախութեամբ կը դի-

մն մեր հարազատ ընկերն է, մենք երեցներս անոր պլուած ենք. ծաղիկը մեզի կը նայի մենք ալ իրեն: 2015 Մայիս 3-ի խորշակը մեզի կը տանի հեռու, հեռու, մեր բարեկէցիկ՝ չըսելու համար աղբատիկ մանկութիւնը եւ ուրախութեամբ կը դիտենք այսօրուան բարգաւաճ ընտանիքները, կայտառ ու զարգացած երիտասարդները:

Կտրիճները ձեռք ձեռքի տալով հիանալի պաշտպանութեան գօտի



մը կը կազմեն որուն ետեւէն մենք մէկ գիծի վրայ կը յառաջանանք: Ճամբուն փոսերն ու ճեղքերը անտանելի պիտի թուին նստողներուն համար, ուր մնաց մեր երեց քալողներուն համար, մէկ ժամ քալել մօտ երկու ժամ ալ պարտեզը սպասել վերջ...: Տուներ, սրճարաններ, անցորդներ, վերի ու վարի պատուհաններ, բոլորը մեզ կը դիտեն, այո, մեզ, երեցներս: Մեր յաղթանակի օրն է, վերապրողներու զաւակներ ենք: Կարծես մեր ոյժը կ'աւելնայ, աւելի վեր կը բարձրացնենք ցուցատախտակները իրարու ժպիտ փոխանակելով:

Կը հասնինք վերջին հանգրուանը. Ծիծեռնակաբերդի հոյակապ մանրիկն է սկառուտական չուանի կապերով շինուած: Խորխտ Անմոռուկը հոն է, կը տիրապետէ հազարաւոր ժողովուրդին վրայ: Ինծի ալ կը նայի, կը ցնցէ, վայրկեան մը կը յուզէ, յետոյ զիս կը սարսափեցնէ: Պարզապէս կը վախնամ որ այդ ծաղիկը օր մը թառամի: Կը հասնին ուրիշ կտրիճներ: Անոնց կարմիր շապիկին վրայ կը կարդամ ԼԵՈՆ

Շանթ տակը Բեկոր Աշոտ. Նուիրական անուններ որոնք սփիւռք մը կերտեցին. ցաւերու մէջ երկունքող մայրէն հայրենիք մը շինեցին: Օ՛ն երիտասարդ ՀԲԸՄի սկառուտներ եւ համայն միացած գայիկներ, ծանր լուծեր դրուած են ձեր վրայ, բայց մի վիատիք, ճշմարտութիւնը շուտով երեւան պիտի ելլէ: Մեր կտրիճները ամեն մէկ քայլափոխի օգնեցին մեզի ծաղիկ դնելու Ծիծեռնակաբերդի աշտարակին առջեւ: Երեցներս խաչակնքեցինք:

Իրիկուան հասանք Արարատ Բնակարաններ, մեր տունը: Շատեր մեզի կը սպասէին: «Երանի դուք ալ մեզի հետ քալի՛ք» եղաւ մեր պատասխանը:

Շնորհակալութիւն նախ ՀԲԸՄին որ տրամադրեց օրուան ինքնաշարժը եւ ապա աշխատող օրուան կամաւոր կտրիճներուն՝ որոնցմէ յիշենք Ալինան, Մեղրի եւ Շողեր քոյրիկները, Սարօն, Ռինան, Լիտիան եւ Սառան:

Է. ՏՐՂԱՏԵԱՆ ԳՈՒՅՈՒՄԵԱՆ
Լաւալ, Քեպէք

Արամ Սրբազան այցելած է Սուրուճ եւ հանդիպած Քոպանիի մէջ ISIS-ի ձեռամբ սպաննուած Յովսէփ Թովմասեանի ընտանիքի անդամներուն



Պոլսոյ Պատրիարքութեան տեղապահ Տ. Արամ Արք. Աթէշեան այցելութիւն տուած է Ուրֆա եւ հանդիպում ունեցած Սուրիոյ դէպքերուն հետեւանքով շրջան հաստատուած Սուրիացի գաղթականներուն հետ: Սրբազան հայրը հասած է Սուրուճ անառ, ուր տեղի գաւառապետին հետ այցելած է օրեր առաջ Քոպանիի մէջ ISIS ահաբեկչական խմբաւորման ձեռամբ սպաննուած Յովսէփ Թովմասեան ընտանիքին: Այս առթիւ Պոլսոյ Պատրիարքարանը հանդէս եկած է յատուկ հաղորդագրութեամբ,
Շար. էջ 14

Պիտի հրատարակուի՝ Թուրքիոյ մէջ Հայկական չորս կաթողիկոսութիւններու կալուածներու փաստաթուղթերը

ՀՀ Ազգային արխիւը 2015 թուականի աշնան կը հրատարակէ «Հայ եկեղեցւոյ կալուածքները Օսմանեան Թուրքիոյ մէջ» օսմաններէն եւ հայերէն աշխատութիւնը, ուր ամփոփուած են Էջմիածինի, Կիլիկիոյ, Կոստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի կաթողիկոսութիւններուն պատկանող եւ Թուրքիոյ տարածքին գտնուող գոյքի իրաւական փաստաթուղթերը: «Արմէնփրէս»-ի փոխանցմամբ՝ այս մասին Յուլիս 8-ին հրաւիրուած ասուլիսի ընթացքին յայտարարած է Հայաստանի ազգային արխիւի տնօրէն Ամատունի Վիրապեան: Աշխատութիւնը յետագային պիտի թարգմանուի նաեւ անգլերէն: «Կան նաեւ սեփականութեան վկայականներ, որոնք ժամանակին տրուել են Օսմանեան Թուրքիայում եկեղեցապատկան հողերի եւ կալուածքների համար», - ըսած է Ա. Վիրապեան:




Ազգային արխիւի տնօրէնը կարելոր համարած է փաստաթուղթերու հրատարակման արդիականութիւնը Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա Կաթողիկոսի առաջնորդութեամբ Թուրքիայի Սահմանադրական դատարան ներկայացուած հայցի ծիրէն ներս, որմով կը պահանջեն օրինական տերերուն վերադարձնել Սիսի կաթողիկոսարանը:

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI 20 JUILLET 2015

Le Président d'Arménie reçoit une délégation du Congrès médical international



Le Président d'Arménie, Serge Sargissian, a reçu une délégation comprenant plusieurs participants au 4e Congrès médical international d'Arménie, qui s'est tenu à Erévan.

Le président a dit croire que ce quatrième congrès se démarquerait par sa productivité. Sargissian a estimé qu'il était inspirant que les Arméniens vivant à l'étranger et ayant eu d'importantes réalisations et savoir-faire contribuent au développement du système de soins de santé de la patrie.

Le président arménien a également indiqué que ce congrès se tiendrait sur une base annuelle.

Les participants ont présenté à Sargissian les résultats des discussions tenues lors du congrès, les accords sur le développement de la coopération ainsi que leur regard sur des recommandations qui permettront de relever les défis du système de soins de santé de l'Arménie, et les avenues possibles afin de relever ces défis.

Les interlocuteurs ont indiqué que même si certains changements positifs sont enregistrés annuellement en Arménie, il y a encore beaucoup de travail à venir, et qu'il est donc indispensable de combiner la capacité de travail des médecins spécialistes d'Arménie et ceux de la diaspora.

Le Premier ministre d'Arménie en visite en France



Le Premier ministre arménien Hovik Abrahamian s'est entretenu avec son homologue français et la maire de Paris, Anne Hidalgo. Il a également visité l'exposition de l'Hôtel de Ville de Paris consacrée au centenaire du Génocide arménien. Le Chef du Gouvernement s'est rendu au diocèse de l'Eglise apostolique arménienne en France et en Europe et a rencontré les représentants de la communauté arménienne. Les Premiers ministres d'Arménie et de France ont également assisté à l'inauguration d'une école arménienne à Alfortville.

Le Premier ministre arménien H. Abrahamian a hautement apprécié le niveau actuel des relations arméno-françaises et l'importance pour le développement et l'approfondissement de la coopération. Selon lui, une importante coopération décentralisée est en place entre l'Arménie et la France : la capitale Erévan et une trentaine de communautés d'Arménie coopèrent avec leurs villes jumelées de France.

Abrahamian a également souligné l'importance du renforcement de la

Suite à la page 8

Une place Henri Verneuil à Bouc Bel Air

Dans le cadre des commémorations du centenaire du génocide arménien, la municipalité de Bouc Bel Air, près de Marseille, dans le sud de la France, a nommé le rond-point de la ville du nom d'Henri Verneuil.

C'est le 27 juin dernier que des élus de la commune, responsables de l'Association culturelle arménienne de Bouc Bel Air (ACABBA) et descendants d'Henri Verneuil, de son vrai nom Achod Malakian, étaient présents, autour de Richard Mallié, maire de la ville et Conseiller départemental, pour rendre hommage à ce cinéaste incontournable du cinéma français et international.

Le Maire de Bouc Bel Air et la famille d'Henri Verneuil ont dévoilé la nouvelle plaque portant le nom du réalisateur Arménien, avant de laisser place aux différents discours prononcés devant les 200 personnes réunies pour l'occasion.

Cette dénomination poursuit également un double objectif. En rendant hommage à Henri Verneuil, elle s'inscrit dans le cadre de la commémora-



tion du centenaire du génocide Arménien ainsi que la volonté de poursuivre le développement équilibré de la commune et souligne par là-même son engagement en matière d'éco-mobilité.

La soirée s'est terminée en beauté, puisqu'une projection en plein air du grand classique « La Vache et le Prisonnier » a eu lieu sur la place de la Mairie, histoire de faire découvrir ou redécouvrir au public ce que donne un long métrage réalisé de main de maître, allié au talent exceptionnel de Fernandel.

Lavrov déplore les tentatives de politisation des manifestations en Arménie

La Russie a haussé le ton le 2 juillet dernier, par la voix de son ministre des affaires étrangères, Sergey Lavrov, qui a déploré les tentatives visant à exploiter politiquement le mouvement de protestation qui persiste en Arménie contre la hausse des tarifs d'électricité. S'exprimant devant un forum de la jeunesse internationale à Moscou, S. Lavrov s'en est pris aux jeunes participant à ces « manifestations soi-disant pacifiques », en établissant un parallèle entre le mouvement Maidan de Kiev et les manifestations d'Erévan, qui seraient donc elles aussi manipulées par l'Occident.

« Vous savez comment ont commencé les manifestations de couleur, - le [mouvement] Maidan en Ukraine, et les événements ayant cours actuellement en Arménie, » a ainsi lancé le chef de la diplomatie russe, en dénonçant ceux qui tentent de les instrumentaliser en vue de renforcer l'hostilité au gouvernement en place, et ce « même si les origines de ces événements sont purement économiques. » « Certains, semble-t-il, ont intérêt à orienter ces processus dans une direction politique », a ajouté M. Lavrov, sans préciser si ses remarques visaient l'opposition parlementaire arménienne, les groupes civiques qui ont pris la tête du mouvement, ou les puissances occidentales que la Russie accuse régulièrement de chercher à soustraire de son influence les ex-Républiques soviétiques.

Deux jours avant, une commission mixte russo-arménienne s'était réunie pour trouver une issue à la crise et avait décidé d'organiser un audit sur le réseau de distribution électrique, dont le propriétaire, un grand groupe russe, a rejeté la responsabilité de la hausse controversée des tarifs sur la mauvaise gouvernance des prestataires et des services publics arméniens. La Russie persiste cependant à considérer la question des tarifs de l'électricité comme un « problème interne » de l'Arménie. S. Lavrov, dont le père est d'origine arménienne, avait accusé de la même manière au début de l'année certaines puissances occidentales d'attiser le feu en Arménie en cherchant à retirer quelque « avantage géopolitique » de l'indignation provoquée par le massacre d'une famille entière de Gumri par un conscrit russe. Dans un geste d'apaisement, la Russie vient d'ailleurs de répondre aux demandes de l'Arménie en remettant le tueur à la justice russe.

Les nouveaux tarifs d'électricité ont été approuvés lors de la session de la Commission des services publics de réglementation d'Arménie le 17 juin. Le prix de l'électricité a augmenté de 6,93 AMD, atteignant 48,78 AMD pour 1 kWh. 237 citoyens qui protestaient contre le prix de l'électricité ont été arrêtés sur l'avenue Baghramian et à proximité de la Place de la Liberté le 23 juin pour violation de l'ordre public. La police a utilisé la force physique et dispersé la manifestation en utilisant des canons à eau. Un certain nombre de militants et de journalistes ont été arrêtés. Ils ont été libérés et poursuivent leur mouvement de protestation depuis. Le Président de la République d'Arménie a annoncé que le tarif d'électricité serait subventionné.



Un député arménien de Turquie résout une première question importante pour les Arméniens

Le député arménien Garo Paylan du Parti démocratique du peuple kurde (HDP) a résolu un premier problème important pour les Arméniens résidant en Turquie.

Le quotidien arménien d'Istanbul « Agos » a indiqué que lors de l'ouverture de la session parlementaire, le député Garo Paylan, nouvellement élu, a rencontré le ministre de l'Education nationale de Turquie, Nabi Avci, et a soulevé la question de l'admission dans des écoles correspondantes, des enfants sans code ethnique et appartenant à des minorités nationales. Garo Paylan a expliqué au ministre qu'aucun projet de loi n'était nécessaire et qu'il était assez simple d'adopter une résolution.

Le ministre de l'Education nationale de la Turquie a adopté, à la suite à cette réunion, un décret permettant aux enfants des minorités qu'ils soient admis dans les écoles appartenant à des minorités, en se contentant d'en faire la demande à la direction de l'établissement.

Le problème a débuté, il y a 2 ans, lorsqu'un enfant arménien d'Istanbul, n'a pas été admis dans une école arménienne, parce que les Arméniens portent Code 2, alors que cet enfant n'avait pas de code.

Décès du « Capitaine Kirk » Kerkorian, milliardaire et financier

L'existence de Kirk Kerkorian aura ressemblé à une très longue partie de poker, rythmée par des coups de bluff et des prises de risque qui en ont fait l'un des Américains les plus riches. Le magnat des casinos et des studios hollywoodiens est mort, lundi 15 juin, à l'âge de 98 ans à son domicile de Beverly Hills (Californie).

Kerkor Kerkorian est né à Fresno (Californie) le 6 juin 1917 dans une famille d'immigrants arméniens. Très vite, il américanise son prénom pour se faire appeler Kirk. Entre une mère au foyer et un père marchand de fruits, la famille tire le diable par la queue. « Nous avons déménagé au moins une vingtaine de fois lorsque j'étais petit, expliquait-il au magazine Fortune en 1969. La plupart du temps, faute de pouvoir payer le loyer, nous étions expulsés ».

D'un tempérament bagarreur, un mauvais coup de poing donné au fils de son institutrice lui vaut d'être envoyé en maison de correction. Il quitte l'école dès 14 ans pour enchaîner les petits boulots avant que son frère, Nishon, l'incite à se mettre à la boxe amateur. Avec 29 victoires sur 33 combats, il devient champion du Pacifique des poids Welters. Mais trop petit pour passer professionnel, il décide en 1939 de devenir pilote d'avion. Une passion qui l'amène pendant la guerre à piloter des bombardiers dans la Royal Air Force.

Après la guerre, il se lance dans le commerce des surplus militaires et amasse un pécule qui lui permet de s'acheter un avion pour monter une petite compagnie de charters à Los Angeles dès 1947. Sa clientèle est en partie composée d'artistes



d'Hollywood, qui vont jouer à Las Vegas. Il découvre alors les tables de Blackjack et devient rapidement un gros joueur au casino, comme dans les affaires.

En 1962, il fusionne sa compagnie, Trans International Airlines avec un concurrent plus gros, Studebaker, avant de racheter l'ensemble deux ans plus tard. Entre-temps, il commence à investir dans l'immobilier à Vegas en achetant notamment le terrain où se construira en 1966 le Caesar Palace. « L'un des meilleurs coups de sa carrière », avouera-t-il plus tard.

Ce n'est pourtant qu'un début : à la fin des années 1960 il rachète le Flamingo et fait construire l'International Hôtel. Sentant qu'il a le vent en poupe, il s'attaque à plus gros en tentant de prendre le contrôle de la Metro-Goldwyn-Mayer (MGM), d'où il arrive à déloger le Canadien, Edgar Bronfman.

Kirk Kerkorian était l'un des hommes les plus riches de la planète. Sa fortune étant évaluée en 2015 selon Forbes à 4,2 milliards de dollars. Kirk Kerkorian qui avait beaucoup aidé l'Arménie, avait reçu le titre de « Héros National » en Arménie.

la municipalité d'Érévan. Anne Hidalgo a déclaré que les deux capitales ont un grand potentiel pour le développement de la coopération économique. Elle attache de l'importance à l'approfondissement de la coopération dans les domaines de la science, l'éducation, l'informatique et le tourisme. La maire a souligné le rôle et la contribution de la communauté franco-arménienne au développement de la France et plus particulièrement de Paris.

Le Premier ministre...

Suite de la page 7

coopération entre les deux capitales et hautement apprécié la contribution d'Anne Hidalgo à renforcer ces liens. Selon lui, les programmes prévus dans le cadre de la coopération Érévan-Paris sont au centre de l'attention du Gouvernement arménien. Il s'est également déclaré prêt à soutenir la mise en œuvre de programmes conjoints avec

Le premier ministre du Karabagh rencontre des bienfaiteurs Arméniens de France



Le Premier ministre de la République du Haut-Karabagh, Ara Haroutyunian, a reçu un groupe de membres de la section française du Fonds arménien Hayastan.

« Bienvenue en Artzakh, une terre en développement (...) auquel vous avez contribué, » a déclaré Haroutyunian aux invités.

Ara Haroutyunian a également souligné l'importance de l'implication des bienfaiteurs Arméniens de France dans la vie quotidienne de l'Artzakh, et l'aide mise en œuvre pour des projets caritatifs dans la république.

Le premier ministre a également répondu à plusieurs questions. Les participants ont, pour leur part, exprimé l'espoir que, grâce au développement économique, le peuple d'Artzakh tiendra plus fermement à son sol natal.

Un Maire nationaliste turc offense les Arméniens sur son compte Twitter

Un autre discours racistes et de haine a été ajouté à ceux des maires membres du mouvement nationaliste (MHP) de Turquie.

Selon le quotidien arménien d'Istanbul « Agos », le maire d'Adana et membre du parti MHP (Parti d'action nationaliste) Hüseyin Sözlü a tenté d'offenser les députés arméniens sur sa page Twitter, en utilisant le nom de Matild Manoukian, ancienne propriétaire arménienne de bordels en Turquie.

« Le neveu de Manoukian résidant à Adana est heureux. Les enfants des

trois tantes sont entrés au Parlement grâce aux deux Partis républicains Justice et Développement.

Indépendamment de leurs fiertés, ce n'est pas encore assez, » a écrit le maire nationaliste d'Adana.

Les utilisateurs de Twitter ont condamné ce discours raciste, après quoi le maire a retiré son message, laissant une autre note similaire : « Nous ne pouvons pas être gentil avec ceux qui, au Parlement de Turquie, disent que « les Turcs ont commis un génocide. »

Bakou en colère contre Londres

La visite prévue en Grande-Bretagne du dirigeant « séparatiste » de la région du Nagorny-Karabagh, disputée depuis plus de vingt ans entre l'Arménie et l'Azerbaïdjan, a provoqué la colère de Bakou, qui a convoqué l'ambassadeur britannique en signe de protestation. « L'Azerbaïdjan a remis une note de protestation au Foreign Office », a indiqué le ministère azerbaïdjanais des Affaires étrangères. La veille, les autorités de cette ancienne république soviétique du Caucase avaient convoqué l'ambassadeur britannique à Bakou, Irfan Siddiq, pour protester contre le projet de visite de Bako Sahakian, président du Nagorny-Karabagh.

Sa visite « est un coup porté à la souveraineté et à l'intégrité territoriale de l'Azerbaïdjan, » a indiqué le ministère dans un communiqué.

M. Sahakian doit se rendre à Londres afin de participer à une rencontre à l'institut Chatham House, où il évoquera « la situation politique intérieure, et partagera sa vision de la sécurité de la région, » selon les organisateurs.

Les autorités britanniques ont de leur côté affirmé que la visite du dirigeant séparatiste n'était pas de leur ressort. « La Grande-Bretagne ne reconnaît pas la république autoproclamée du Nagorny-Karabagh et le

gouvernement britannique n'a aucun contact avec ses représentants, » a indiqué M. Siddiq devant les journalistes à Bakou. En mai, les autorités azerbaïdjanaises avaient déjà convoqué l'ambassadeur français pour protester contre une visite en France de Bako Sahakian.

Les autorités britanniques ont cherché à se distancer de la visite, affirmant que le président du Karabagh se rendait en Grande-Bretagne de façon indépendante.

« Le Royaume-Uni ne reconnaît pas la République auto-proclamée du Haut-Karabagh et le gouvernement du Royaume-Uni n'a aucun contact avec l'un de ses représentants, » a déclaré l'ambassadeur Siddiq aux journalistes, à Bakou. Malgré des années de négociations, l'Azerbaïdjan et l'Arménie n'ont pas signé d'accord de paix.

La trêve convenue en 1994 a été violée par des combats sporadiques, avec des affrontements intenses le long de la ligne de front du Karabagh au cours de l'année écoulée.

Bakou, dont les dépenses militaires dépassent à elles seules le budget de l'Arménie, a menacé de reprendre le territoire contesté par la force si les négociations échouaient. Soutenue militairement par la Russie, l'Arménie affirme qu'elle pourrait écraser toute offensive.

ABAKA

ENGLISH SECTION

MONDAY JULY 20, 2015

The Second Genocide

By Edmond Y. Azadian

Armenia is a small country full of ancient monuments, with many Soviet-era statues dedicated to writers, composers and heroes. Many historic monuments and churches still remain in disrepair, waiting for the relevant authorities to save them from obliteration.

In view of the abundance of monuments, one would hesitate to propose another memorial. But the time has arrived to look into another dark chapter of Armenian history and erect a new memorial to the victims of the Stalin-era purges and executions.

I have always wondered how educated and erudite all tyrants have to be in order to select the best and brightest among the intellectuals for extermination. One does not need to go to the Inquisition era to find victims of intellectual terror, because even Queen Elizabeth I, during whose reign literature and art flourished in Britain, had blood on her hands since she chopped the heads and limbs of many of her contemporary writers and scholars.

Talaat Pasha seems to have been an equally “erudite” tyrant to be able to select the cream of the Armenian community in Istanbul, such as Taniel Varoujan, Krikor Zohrab, Yeroukhan, Rouben Zartarian, Ardashes Harutunian, Roupén Sevag, Komitas and another 200 prominent writers and leaders for execution.

It is ironic that Stalin himself had the same “distinction” to execute Charents, Bakunts, Totovents, Zabel Yessayan and 700 other writers, scholars, scientists and political leaders. Additionally, hundreds of thousands of other innocent people were exiled to Siberia to die of hunger and exposure.

The Soviet system was a huge experiment of population engineering which ended in catastrophic failure.

The system was so cynical that it assigned quotas for each constituent republic of the union. Numbers were assigned for mass deportations of ordinary citizens. Also, there were numbers assigned for writers, artists and intellectuals to be executed.

Instruments of torture were devised to be taken from one republic to the next to extract “confessions” from potential victims. Once the quotas were met, it was the task of the executioners to find their victims and send them in front of the firing squad.

Documents have surfaced recently that Anastas Mikoyan, the prominent Soviet statesman, had urged Stalin to increase the number of potential victims in Armenia by 500 to ingratiate himself to the tyrant.

In addition to hundreds of thousands of Armenians exiled to Siberia,

it is believed that Stalin deliberately chose almost one hundred thousand Armenian soldiers to be used as cannon fodder during the battle of Kerch, in Crimea, during World War II.

Many may argue that Stalin’s terror was not directed only towards Armenia alone, as all the republics suffered under his reign of terror. But the difference is that Armenia was reeling from the first genocide of the century only a decade or two earlier. The other difference is that hundreds of diasporan Armenians were lured to repatriate to the Republic of Armenia and they ended up in the Siberian gulags.

Indeed, such a fervor of patriotism was engendered throughout the diaspora that a massive emigration was organized from the Middle Eastern countries, as well as Greece, France and even the US.

Before the Armenian writers were executed, they were accused of entertaining “nationalistic sentiments.” Any criticism in the press leveled against a writer was equivalent to a death warrant. Even if no proof existed in a writer’s book, the assumption that he may have had “nationalistic sentiments” in his mind was enough for the executioner to convict the writer to certain death.

The literary historian David Gasparian has published a voluminous book (726 pages), titled *Behind the Locked Doors*, based on research into the KGB archives. It becomes clear that for a writer to be accused, the lever of the accusations were so flimsy and the verdicts so arbitrary and predetermined, that one can only experience rage. In many cases, life-and-death decisions regarding the lives of writers were made in less than 30 minutes.

In 1937, Stalin, to cover up his cynicism, “devised another cynicism,” according to the book. Since many victims had shouted “Long Live Stalin” before their execution, that meant that “Stalin was the ‘father of all’ and could not commit such crimes. Therefore, the KGB apparatus was responsible for the crimes and began and purge of that apparatus, killing 20,000 agents. That also hit Armenians in September 1937. All those who had tortured and executed the phalanx of Armenians writers were sent to the firing squad, the most notorious among them were Vahram Chitouny, Khoren Moughdoussy, Ivan Gevorgov, Sahak Ter Gabrielian and many others.

After Stalin’s death in 1953, Nikita Khrushchev relaxed the regime and almost all the victims of terror were rehabilitated. Those still alive in Siberia returned home. Gourgen Mahari, Vahram Alazan, Mugurdich Armen and many others returned to Yerevan, emaciated and broken. Not

Cont’d on page 10

Belgian parliament’s commission adopts Armenian Genocide resolution

Commission for foreign relations of the Belgian Chamber of Deputies has adopted resolution on the Armenian Genocide. This was reported by the European Armenian Federation for Justice Democracy.

The draft resolution presented by parliamentary majority has been adopted.

The parliamentary majority has introduced a draft bill for an urgent debate to adopt it at the plenary session before the recess. The draft bills were also introduced by Humanist Democratic Centre, Socialist Party and “Flemish Interest”.

Last month Belgian Prime Minister Charles Michel on behalf of his government recognized the Armenian Genocide that occurred in the Ottoman Empire one hundred years ago.

The Belgian PM said he believes the 1915-1917 events should be “considered a genocide”.



Armenia FM and EU representative discuss Karabakh settlement



Armenia’s Foreign Minister Edward Nalbandian on Tuesday received Herbert Salber, the European Union (EU) Special Representative for the South Caucasus and the crisis in Georgia. Armenian FM briefed the EU official on the events marking the centenary of the Armenian Genocide.

The parties discussed efforts of Armenia and OSCE Minsk Group targeted at

Cont’d on page 10

Karabakh MFA: PACE should avoid biased formulations

Such a reputable structure as the Parliamentary Assembly of the Council of Europe (PACE) should avoid adopting any documents containing biased formulations of Azerbaijani propaganda machine.

The Minister of Foreign Affairs of the Nagorno-Karabakh Republic (NKR; Artsakh), Karen Mirzoyan, told the aforesaid to Karabakh-Open.info.

In response to the query on whether there are any developments regarding the fact that last year, the PACE adopted resolutions on preparing two reports related to the NKR and entitled “Escalation of Violence in Nagorno Karabakh and the Other Occupied Territories of Azerbaijan” and “The Inhabitants of Frontier Regions of Azerbaijan are Deliberately Deprived of Water,” and whether the PACE rapporteurs are expected to visit Artsakh, Mirzoyan responded: “On the subject of the Rapporteurs’ visit to Artsakh, according to the accepted procedure, the NKR authorities should be contacted directly with such a request. To date, all the visits of different international missions to Artsakh have taken place with the consent and support of the NKR authorities. The NKR authori-



ties will make a decision on the Rapporteurs’ visit after a corresponding application is submitted and the visit is considered expedient. Since we haven’t received any applications it is too early to discuss the probability of the visit.

“At the same time, I should note that both the titles of the reports and the statements of the MPs preparing them, raise doubts about their impartiality. We are convinced that such a reputable structure as the PACE should avoid adopting any documents containing biased formulations of Azerbaijani propaganda machine. Such documents, if adopted will not only become purely a matter of speculations by Azerbaijan, but can also cause

Cont’d on page 10

Provision on 3 fundamental principles remains unchanged in OSCE PA resolution

The provision on three fundamental principles of the Helsinki Act remained unchanged in the resolution of OSCE PA General Committee on Political Affairs and Security, head of Armenian delegation to OSCE PA Artashes Geghamyan said.

The resolution was adopted during the plenary session on Tuesday, Artashes Geghamyan told Armenian News-NEWS.am.

According to him, the most important was provision on three fundamental principles of the Helsinki Act based on which the Karabakh conflict must be resolved.

“These are principles of non-use of force, territorial integrity and nations’ right to self-determination,” he said, adding that the final declaration will be adopted on July 9.

The summer session of the OSCE PA dedicated to the 40th anniversary of signing of the Helsinki Final Act is underway in Helsinki.

Armenia Economy Minister: Armenia can attract investments from EU and not only

Armenia can attract investments from Europe and not only, Armenia’s Economy Minister Karen Chshmaritian said at an economic forum held in Yerevan on Tuesday.

Accession to the Eurasian Economic Union (EEU) opens up new opportunities. The further depends on the reasonable business strategies, he said.

“Armenia’s integration also opens up new opportunities for European entrepreneurs and not only, who by establishing businesses in Armenia will get access to the EEU market. Conversely, the EEU companies will be able to get access to the EU market through Armenia, since the EU has applied the preferential regime GSP+ to Armenia. Armenia’s preferential



regimes are also applicable in the United States, Canada, Norway, Switzerland and Japan,” Chshmaritian said.

During the visit of Armenia’s President to the United States, Trade and Investment Framework Agreement (TIFA) was signed.

Armenia FM and EU...

Cont’d from page 9

advancing the peaceful talks on the settlement of Karabakh conflict.

Minister Nalbandian and EU representative touched upon the Riga summit declaration that expressed support for the efforts of the leaders of the OCE Minsk Group Co-Chairing states and their statement made in 2009.

The EU representative noted there is no alternative to peaceful resolution of the Karabakh conflict and reassured EU assistance to the talks held in OSCE Minsk Group format.

The Second...

Cont’d from page 9

very many writers recounted their horrendous ordeal in exile. Gourgen Mahari, however, wrote his sardonic memoirs about that experience. Incidentally, he was sent back to Siberia even after Stalin’s death, accused of being “enemy of the people” and the court recorder’s typographical error extended his 10-year sentence to 11 years.

Mugurdich Armen published a collection of short stories, all based on the theme of exile, under the title *We Were Asked to Deliver to You*. The sufferings of all those left behind were transmitted to posterity through that book.

Many agents serving in the death machine ironically met their demise under that same mechanism. But the writers who played a sinister role in the fate of their fellow writers by fingering them to the authorities for arrest or worse, lived to a ripe age, even long after their victims were rehabilitated and called “The Just”

(Not the innocents) because those evildoers were still considered untouchable. Two names in particular come up every time the issue is discussed: Hrachya Kochar and Nayiri Zarian.

When Armenia became independent, many executioners, their friends or relatives were still alive and they could be questioned as to the whereabouts of the remains of Charents or Bakunts. No government commission was formed to properly research and bring to light the facts of that dark period.

Only individual initiatives were taken, for example, David Gasparian himself began excavating in a suburb of Yerevan, where Charents’ remains were buried, according to the memoirs of a prison guard.

The issue was also raised by the novelist Norayr Adalian and it was recently revived by a young literary historian, Akamenik Nikoghosian. But still, no official action has been taken.

Armenians are very eager to have Turkey open the Ottoman archives to establish all the facts related to the Genocide, but the KGB archives in Armenia are open for anyone to

Lord Alton: What Does Armenian Genocide teach us today?



Debate on Article 18 of the 1948 Universal Declaration on Human Rights will be held in the House of Lords in UK, specifically touching on the right to freedom of thought, conscience and religion, which are currently violated worldwide.

As MP Lord David Alton writes in his blog, religious persecution of Christians are going on around the globe and it’s necessary to remember what Armenian Genocide teaches us.

According to him, systematic persecution of Christians is not a new phenomenon. In the Roman Empire Christians were condemned to death. Also campaigns against the Armenian Christians and Christians in Namibia were being held, which Lord Alton calls “the first genocides of the twentieth century”.

He reminds that Armenia adopted Christianity back in the 4th century, and even then fell victim to the persecution by the Roman Empire. The same persecutions recurred after 600 years.

Besides, Lord Alton notes that it’s the Armenian Genocide and the novel *The Forty Days of Musa Dagh* by Franz Werfel that can teach us a lot today, when Christians are persecuted all over the world.

Karabagh MFA:...

Cont’d from page 9

serious damage to the negotiation process. We hope that the PACE will display political maturity not to allow for its platform to be used as a propaganda tribune for Azerbaijan.”

The NKR FM also stated: “Azerbaijan traditionally tries to use international platforms provided by international organizations, including the PACE, for its propaganda and disinformation. Meanwhile, the Council of Europe is a leading pan-European

structure on the protection of human rights, the principles of legal state and the rule of law, which cannot overlook the deplorable democracy and human rights situation in Azerbaijan. Instead of accusing the Council of Europe of using double standards, Azerbaijan should rather fulfill its commitments on strengthening the rule of law, democracy and human rights in the country. It will not only serve the interests of the people of Azerbaijan, but is also one of the most important conditions for establishing peace and stability in the region.”

conduct research, with very few takers.

While Stalin’s terror was raging, the Diaspora was divided on the issue. Of course, the ARF was fiercely critical, but since the party criticized everything in Armenia, the positive and the sinister equally, their criticism lost its impact. The other segments of the community were mostly silent, presumably preserving a patriotic policy. Only one voice in that camp was heard, that of the writer and scholar Arshag Chobanian, an ADL leader, a one-man committee fighting for the Armenian cause in Paris. He single-handedly published a literary magazine called *Anahid*, in which he raised his voice in 1938 about the fate of Charents and other writers. It was no wonder that Laurenti Beria, a Stalinist henchman, assassinated Aghassi Khanjian, a rising star in Soviet hierarchy, after accusing him of having collaborated with Arshag Chobanian, whom they called “an agent of the French intelligence service.”

Before Stalin’s terror machine began its grisly work throughout the Soviet Union, Ukrainians were his first

victims. Stalin began the collectivization of agriculture in that country (1932-1933) by completely eliminating the kulak class (farmers), rendering Ukraine, the breadbasket of Europe, into a basket case with its population dying from famine. To put down the resistance of the kulaks, Stalin starved the entire country, creating an artificial famine.

Although the numbers are different, it is safe to assume that approximately 7 million Ukrainians fell victim to that famine, which they named *Holodomor*.

After its independence in 2006, Ukraine officially designated *Holodomor* as a genocide.

Armenians need to choose a day to commemorate the victims of their second genocide. Yes, indeed, Armenia’s territory is populated by too many monuments, but still, there is room for one more, a very significant one for the victims of Stalin’s terror. A Vietnam War memorial format would be more appropriate, in which the names of all the victims are carved out, to be remembered and recorded for posterity.

ՀՀ պատգամաւորը շահագրգռուած է Մուշի հայկական գերեզմանատան բարեկարգման օժանդակելու հարցով

Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւոր Արագած Ախոյեան շահագրգռուած է Արեւմտեան Հայաստանի մէջ Մուշի հայութեան պահպանուած գերեզմանատունը բարեկարգելու հեռանկարով: Գերեզմանատունը կ'ընդգրկէ շուրջ 8 հազար քմ. տարածք, ուր կը գտնուի նաեւ Գեորգ Չաուշի գերեզմանը: «Արմէնփրէս»-ի հետ գրոյցի ընթացքին Արագած Ախոյեան նշած է, որ տեղի հայութիւնը նոյնպէս շահագրգռուած է այդ գերեզմանատունը բարեկարգելու հարցով, իսկ ինք ամէն ինչ պիտի ընէ, որպէսզի աջակցի անոնց: «Ես Յունիսի 8-ին կը լինեմ Արեւմտեան Հայաստանում, տեղում կը տեսնեմ ինչ կարող ենք անել: Կարծես թէ գերեզմանատունը բարեկարգելու, ցանկապատելու թոյլտուութիւն արդէն կայ: Տեղում կը տեսնեմ, թէ ինչ է արուած: Դա եղել է Մուշի հայութեան գերեզմանոցը, որն այսօր պահպանուած է, եւ մենք պէտք է անենք հնարաւորը այն բարեկարգելու համար: Ես օգտագործելու եմ իմ կապերը, բոլոր հնարաւորութիւնները՝ նախաձեռնութիւնը կեանքի կոչելու համար», - նշած է Ախոյեան:

Պատգամաւորը գերեզմանոցի վերականգնումը կարելի կը համարէ առաջին հերթին, որովհետեւ շատ ծպտեալ հայեր կը մտածեն՝ ո՞ր իրենց պիտի թաղեն, եթէ իրենք վերադառնան իրենց արմատներուն եւ նորէն քրիստոնէութիւն ընդունին: «Իսլամական գերեզմանոցում այդ դէպքում, բնականաբար, չեն կարող նրանց թաղել, իսկ հայկական գերեզմանոց, ըստ էութեան չկայ: Դրա համար հարկաւոր է կեանքի կոչել այս կարելի նախաձեռնութիւնը», - ընդգծած է Ախոյեան:

Արեւմտեան Հայաստանի մէջ իրականացուելիք միւս ծրագիրներու մասին Արագած Ախոյեան չուզեց մանրամասնութիւններ հաղորդել՝ ընդգծելով, որ այդ մասին կը խօսի վերադառնալէն ետք: Անոր խօսքով՝ ընդունուած է երթալէն առաջ ոչինչ ըսել, իսկ վերադառնալէն ետք խօսիլ այնքան, որքան կարելի է:

Ախոյեանն անդրադարձաւ նաեւ Արագածոտնի մարզի մէջ Արշակունիներու դամբարանի պեղումներու ընթացքին՝ ընդգծելով, որ արդէն բաւական աշխատանք կատարուած է, կան բաւական հետաքրքրական



գտածոներ: «Ես նախաձեռնել եմ, որ պետութիւնը միջոցներ յատկացնի այդ պեղումները սկսելու համար, եւ կարող եմ ասել, որ շատ գոհ ենք արդիւնքներից, քանի որ բաւականին հետաքրքիր գտածոներ կան: Ես հետեւողական եմ լինելու, որպէսզի կառավարութիւնը նոր տարուայ պիւջենով կրկին յատկացումներ անի, որպէսզի աշխատանքներն այնտեղ չկանգնեն», - վստահեցուց Ախոյեան՝ ընդգծելով, որ եթէ հայերու համար հոգեւոր սրբութիւնը Մայր Աթոռն է, ապա աշխարհիկ սրբութիւնը Արշակունիներու հարստութեան դամբարանն է, որ ուսումնասիրութեան կարիք ունի:

Պարպարա Սթրեյզանտ. «Գըրգ Գըրգորեան եզակի եւ առանձնայատուկ մարդ էր»

Ամերիկացի յայտնի երգչուհի եւ դերասանուհի Պարպարա Սթրեյզանտ ֆէյսպուքեան իր էջին վրայ գրած է հայ միլիառատէր եւ բարերար Գըրգ Գըրգորեանի մասին իր ջերմ յիշողութիւնները: Այս մասին կը յայտնէ sputnikarmenia.ru-ն:

«Երկար տարիներ Գըրգ Գըրգորեան արտակարգ առատաձեռն մարդ էր: Ան հազուադէպ ուշադրութիւն կամ իր բարեգործութեան ճանաչում կը փնտռէր», - կը գրէ ան:

Սթրեյզանտ յիշած է, որ 1969-ին ինք մասնակցած է Լաս-Վեկասի մէջ Գըրգորեանին պատկանող միջազգային հիւրանոցի բացման:

«Իսկ յետոյ՝ 1993-ին, ես կրկին այնտեղ վերադարձայ հիասքանչ MGM Grand Hotel-ի բացումին», - կը նշէ ան:

Երգչուհիին խօսքով՝ այդ շրջանին իր հիմնադրամին մէջ Գըրգորեանի առատաձեռն ներդրման շնորհիւ յաջողած է աջակցելու մարդոց ԶԻԱՀ-ի դէմ, կանանց եւ երեխա-



ներու իրաւունքներու, շրջակայ միջավայրի պահպանութեան համար պայքարին:

«Յետոյ՝ 2013-ին, ան դարձեալ միացաւ ինձի կանանց մօտ սրտային հիւանդութիւններու տարածման դէմ պայքարին: Ան իւրապատուկ, եզակի եւ շատ առանձնայատուկ մարդ էր, եւ ես միշտ անոր շնորհակալ պիտի ըլլամ», - գրած է Սթրեյզանտ:

Հայաստանի ազգային հերոս Գըրգ Գըրգորեան մահացած է 2015-ի Յունիսի 16-ի գիշերը 98 տարեկանին:

Արտերկիրէն ժամանած 12 հայ...

Շար. էջ 2-էն

ըսած է «Արցախ» հայրենակցական միութեան անդամ, ՀՀԿ-ական պատգամաւոր, ծնունդով դարաբաղցի Համլէտ Յարութիւնեան:

Յունիս 20-ին Կարդենիս-Քարվաճառ մայրուղիով Արցախ ժամանած էին հիմնականօրէն Ռուսիա բնակող մօտ 200 ընտանիք՝ «Արցախ» հայրենակցական միութեան նախագահ Կարուժան Գրիգորեանի գլխաւորութեամբ:

Նախաձեռնութիւնը միութեան նախագահ Կարուժան Գրիգորեանին է, որ գլխաւորած է հայրենադարձ ընտանիքներու պատուիրակութիւնը: Ծանապարհին Արցախի վարչապետ Արայիկ Յարութիւնեան Շահումեանի շրջանին մէջ դիմաւորած է հիւրերը: Ան ընդգծած է, որ նախաձեռնութիւնը ունի նաեւ տնտեսական բաղադրիչ, սակայն ամենակարեւորը արցախցիները իրենց պատմական հայրենիքի հետ կապելն է:

2015-ին The Guardian-ը ամենաարկածային վայրերու ցանկին մէջ ընդգրկած է Արցախը, ուր կարելի է արձակուրդը անցնել: Բրիտանական զբօսաշրջային Regent Holidays ընկերութիւնը զբօսաշրջային ուղեգիրներ կ'առաջարկէ Երեւանով դէպի Լեռնային Ղարաբաղ:

Թուրք մտաւորականները Հայ պատգամաւորներուն համերաշխութիւն ցուցաբերած են

Վերջին օրերուն Թուրքիոյ մէջ ազգայնամուլական շրջանակներու կողմէ հայ պատգամաւորներուն եւ հայ արուեստագետներու նկատմամբ վիրաւորական եւ ցեղապաշտական յայտարարութիւններուն դէմ դուրս եկած են թուրք յառաջադէմ մտաւորականները, կը գրէ News.am-ը:

Թրքական Gercek gundem կայքի փոխանցմամբ՝ «Անգարայի մտքի ազատութեան» նախաձեռնութեան կողմէ կատարուած յայտարարութեան մտած հայ պատգամաւորներուն՝ փորձելով խաղարկել Թուրքիոյ մէջ հասարակաց տուններու ցանցերու նախկին սեփականատէր Մաթիլտա Մանուկեանի անունը, իսկ Կարսի քաղաքապետը խիստ կատուած էր, որ հայ երաժիշտը Անիի մէջ համերգով հանդէս եկած է:

թիւններու առնչութեամբ: «Անգարայի մտքի ազատութեան» նախաձեռնութեան կողմէ կատարուած յայտարարութեան տակ ստորագրած են մօտ երկու հարիւր թուրք մտաւորական, արուեստագետ, իրաւաբան եւ քաղաքական գործիչ:

Նշենք, որ «Ազգայնական շարժում» կուսակցութեան անդամ, Ատանայի քաղաքապետը վիրաւորած էր խորհրդարան մտած հայ պատգամաւորներուն՝ փորձելով խաղարկել Թուրքիոյ մէջ հասարակաց տուններու ցանցերու նախկին սեփականատէր Մաթիլտա Մանուկեանի անունը, իսկ Կարսի քաղաքապետը խիստ կատուած էր, որ հայ երաժիշտը Անիի մէջ համերգով հանդէս եկած է:

Թուրքիոյ մէջ հայ արուեստագետի գրաքննութեան ենթարկուած գիրքը վերահրատարակուեցաւ

Վենետիկեան 56-րդ մայիսեան պիւնակէին Թուրքիոյ տաղաւարին մէջ ցուցադրուած էր ժամանակակից նկարչութեան վառ ներկայացուցիչ, հայ Սարգիս Չապուսեանի՝ «Շունչ» խորագիրը կրող հաւաքածուն: Այդ ցուցադրութեան համար հրատարակուած էր յատուկ գիրք՝ բաժնուելու այցելուներուն: Գիրքին բաժանումը, սակայն, վերջին պահուն արգիլուած էր, քանի որ Ռաբէլ Տիւրքի եղիւնակած նիւթին մէջ նշուած էր «Հայոց Յեղասպանութիւն» ձեւակերպումը:

Պոլսոյ «Ակօս» թերթը նշած է, թէ գիրքը անցեալ շաբաթ՝ առանց որեւէ բովանդակային փոփոխութեան՝ վերահրատարակուած է, սակայն արդէն առանց Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան տիպերուն: Թերթը յիշեցուցած է նաեւ, որ հակառակ այն հանգամանքին, որ ցուցադրութիւնը սկսելէ անմիջապէս առաջ թուրք կազմակերպիչները հեռացուցած էին գիրքերը, սակայն Սարգիսը կատարուածին իբրեւ ունկնդիր չէ հետեւած եւ գիրքի 144 օրինակները օգտագործելով առանձին հաւաքածու պատրաստած ու ներառած է ցուցադրութեան մէջ:

Նոյն նիւթերով հրատարակուած գիրքին մէջ ակնցած են ցուցադրութեան առնուած քանի մը նկարներ:

ԳԱԼ ՏԱՐԻ ՎԱՆ

Պատառիկներ՝ երազային Արեւմտահայաստանէն ԴԵՊԻ ԱՅՆԹԵՊ

Այնթեպը «հերոսական» է թէ՛ հայերու և թէ՛ թուրքերու համար:

Մեր ինքնապաշտպանութեան պատմութեան ամենափայլուն հերոսամարտերէն մէկը տեղի ունեցած է Այնթեպի մէջ: Իւրաքանչիւր Այնթեպցի անուրանալի իրաւունքը ունի հպարտանալու Այնթեպի հերոսական ինքնապաշտպանութեան պատմութեամբ, մանաւանդ անոնք՝ որոնց մեծ հայրերն ու հարազատները մասնակցած են այդ անհաւասար մարտերուն եւ իրենց սուրբ ու արդար հպարտանքը փոխանցած մեզի, յաջորդ սերունդներուն:

Այնթեպ հարուստ էր իր դպրոցական ցանցով: 17 դպրոց: Յարգելու համար յիշատակը այդ վարժարաններու հիմնադիրներուն, տնօրէններուն եւ ուսուցիչներուն, ինչպէ՛ս կ'ուզեմ յիշել 12 անունները այդ դպրոցներուն (տրամադրութեանս տակ ունիմ միայն 12 վարժարաններու անունները): - Ներսէսեան Վարժարան, Վարդանեան Մանկապարտեզ, Վարդանեան Վարժարան, Վարդանեան Մանչերու Երկրորդական Վարժարան, Աթենական Մանչերու Բարձրագոյն Վարժարան, Յայկանուշ Աղջկանց Երկրորդական Վարժարան, Կիլիկիա Գիշերօթիկ Վարժարան, Կիլիկիա Ճեմարան, Հռիփսիմեանց Աղջկանց Վարժարան, Կրթասիրաց Աղջկանց Վարժարան, Զուրբճեան Յայ Աւետարանական Վարժարան եւ Յայկազեան Վարժարան: Այս վարժարանները կ'ամբողջանային Մանչերու Ամերիկեան Գոլէճով, Աղջկանց Գոլէճով եւ Այնթեպի Գոլէճով: Հոս յիշեցնեմ որ Մեծն Լոս Անճելըսի 300.000-է աւելի հաշուող հայկական գաղութը միայն 12 հայկական դպրոցներ ունի... որոնց մէկ քանին աշակերտի պակաս է կը տառապին եւ ենթակայ են փակուելու:

Ն.Զ. 1900 թուականներուն Հիթլերները կ'իշխէին այս շրջաններուն վրայ: Ապա պատմութեան հոլոկոսթին հետ Ասորեստանցիները, Սումերացիները, Պարսիկները, Յոյները (Մեծն Ալեքսանտր), Հռոմէացիները, Բիւզանդացիները, Հայերը, Արաբները, Խաչակիրները, Սելճուկները եւ վերջապէս Օսմանցի թուրքերը եկան գրաւելու մեր չքնաղ Կիլիկիան ու Այնթեպը:

Այնթեպ նշանաւոր է Յուստինիանոս Կայսրին շինած 38 աշտարակաւոր բերդով: Շրջանը հարուստ է խաղողի այգիներով, ձիթենիներով, պիստակի ծառերով եւ երկրագործական այլ արտադրութիւններով: Շրջապատուած է մշակուած «անծայրածիր» դաշտագետիկներով, պարտեզներով եւ լեռներով: Այնթեպը պատմականօրէն շատ զարգացած եւ բարգաւաճ քաղաք մըն էր նաեւ որովհետեւ առեւտրական ճամբաներու քառուղիներու վրայ շինուած էր:

19-րդ դարու վերջաւորութեան Այնթեպի հայերը զարգացած եւ բարեկեցիկ վիճակ ունէին: Այս ցոյց կու տայ դպրոցական ցանցը իր գոլէճներով: 1874-ին հիմնուած Այնթեպի Ամերիկեան Հիւանդանոցին բժիշկներուն մեծ մասը հայեր էին: Ոլորպատոյտ, նեղ ճամբաներ անցնելով բարձրացանք Ամերիկեան հիւանդանոցը: Երբ այս հիւանդանոցը այցելեցինք, հիւանդներն ու



Ամերիկեան հիւանդանոցի հայ բժիշկները թուրք հիւանդները խնամած առնէն...

քանի մը բժիշկներ զարմանքով մեզ կը դիտէին: Դոկտ. Կարապետ Տերեղիայեանը պատասխանատուներուն ըսաւ, որ «այս հիւանդանոցը հիմնող բարերարներուն թոռներէն ոմանք մեր խումբին մէջ են եւ եկած են իրենց մեծ հայրերուն շինութիւնները այցելելու...»: Եւ իրապէս, հիւանդանոցի պատերուն վրայ կախուած էին նկարներուն տակ գրուած էին հայ բժիշկներու եւ վիրաբոյժներու անունները: Հպարտանալիք թէ բարկանայինք, չէինք գիտեր: Թուրք կոչուած երկուտանիները բուժելու համար հայերը թող հիւանդանոց շինեն, եւ այդ ապերախտ գազանները առողջանալէն ետք՝ սպաննեն զանոնք: Ասիկա Աստուածային արդարութիւն է:

Մինչեւ Սուլթան Համիտ Բ. Հայերը բաւական մը ընդունելի պայմաններու մէջ կ'ապրէին: Համիտ Բ., օգտագործելով թուրքերուն եւ քիւրտերուն նախանձն ու կենդանական բնագոյները, քաջալերեց որ անոնք անպատիժ կողոպտեն, կեղեքեն եւ սպաննեն հայերը: 4 Նոյեմբեր 1895-ին տեղի ունեցաւ Այնթեպի առաջին մեծ կոտորածը: Բազմահարիւր հայեր իրենց կեանքը կորսնցուցին, հայկական թաղերու խանութներն ու տուները կողոպտուեցան: Հարիւրաւոր հայեր վիրաւորուեցան, ոմանց ձեռքերը կացիներով եւ եաթաղաններով կտրեցին, ուրիշներու աչքերը փորեցին...: Այս կոտորածէն ետք, հայկական կուսակցութիւնները սկսան կազմաւորուիլ եւ Ատանայի ջարդէն ետք (1909) իրենց ուժերը միացնելով պատրաստուեցան ինքնապաշտպանութեան: Թուրքերը տեսնելով որ հայերը պատրաստ են դիմադրելու, ետ կեցան իրենց արիւնարբու ախորժակներուն յագուրդ տալու մոլուցքէն:

1915-ի ջարդերէն եւ աքսորներէն ետք, երբ Չորավար Ալէնպիի բանակները Այնթեպ մտան, աքսորուած Այնթեպցիներու մնացորդացը սկսաւ կամաց կամաց վերադառնալ եւ վերաշինել իր պապենական տունը: Առանց պատմութեան մանրամասնութիւններուն մէջ մտնելու, երբ 3 Յունուար 1920-ին Մարաշի կոտորածներու լուրը Այնթեպ հասաւ, Այնթեպցիները, դարձեալ, հայկական կուսակցութիւններու առաջնորդութեամբ (Դաշնակցական,

Հնչակեան եւ Ռամկավար) միանալով դիմեցին ինքնապաշտպանութեան եւ հարուածի: Շուրջ 750 կռուողներ անիմանալի եւ անհաւատալի հերոսութիւններով պաշտպանեցին ժողովուրդը: Սակայն թուրքերու եւ մանաւանդ ֆրանսացիներու միջեւ եղած համաձայնութիւններուն եւ զինուորական ու քաղաքական այլ զարգացումներու պատճառով, անկարելի էր այլեւս հայերուն Այնթեպ մնալ: 1922 Յունուարին արդէն Այնթեպը պարպուած էր հայերէ:

Ինկաւ նաեւ հերոսական Այնթեպը:

Այնթեպի մէջ այցելեցինք Ս. Աստուածածին եկեղեցին (կառուցուած) 1892-ին, ճարտարապետ Սարգիս Պալեանի կողմէ: Այժմ այդ եկեղեցին վերածուած է «Զուրթուլուշ ճամբասի», մզկիթի: Մինարէները



Գարամանուկեաններու բնակարանը

ժանգոտած գամերու նման մխրճուած էին եկեղեցւոյ տանիքներուն: Այդ հսկայական եկեղեցին վերանորոգման աշխատանքներու մէջ էր: Երբ ներս մտանք, իրապէս որ Աստուածածինի վայել կառոյց մըն էր ան: Բնականաբար, ինչպէս ամեն եկեղեցիի մէջ, հոգ չէ թէ ան մզկիթի վերածուած էր, Դոկտ. Կարապիսին առաջնորդութեամբ աղօթեցինք «Հայր Մեր»ը եւ «Տեր Ողորմեա»ն: Չենք գիտեր, արդեօք Աստուած լսե՞ց մեր աղօթքը: Աստուածամայրը լսե՞ց մեզ: Նորոգութիւն ընող գործաւորները լուռ մեզ կը դիտէին: Ի՞նչ կ'անցնէր արդեօք անոնց ուղեղներուն մէջէն: Եկեղեցիին

բոլոր խաչերը սրբուած էին: Թուրքերը բացարձակապէս չեն աղօթեր այն մզկիթի վերածուած եկեղեցիներուն մէջ ուր խաչի նշոյլ մը անգամ կայ: Տեսանք Յայ Կաթողիկէ Եկեղեցին (այժմ՝ «մշակոյթի կեդրոն»ի վերածուած), Ֆրանսիսքեաններու եկեղեցին, որ հայ կաթողիկէ համայնքին կողմէ կը գործածուէր մինչեւ 1921 (շինուած ճարտարապետ Սարգիս Պալեանի կողմէ, այժմ սինեմայի վերածուած), Այնթեպի հայկական թաղամասերը, ինչպէս նաեւ մեր խումբին հետ եղող Գարամանուկեաններու նախնիներուն ապարանքը, շինուած 1906-ին (այժմ Թուրք Ազգագրական Թանգարանի վերածուած), եւ Նազարեաններու նախնիներուն բնակարանը, որ հայապարպումէն ետք նախ Պարսկական հիւպատոսարանի վերածուեցաւ, ապա՝ այժմու սրճարանին...):

Գարամանուկեանները այժմ կը բնակին Գալիֆորնիոյ Ֆրեզնօ քաղաքին մէջ: Ուխտագնացութեան ժամանակ բնականաբար ծանօթացայ այս շատ ազնիւ զոյգին եւ իրենցմէ ստացայ քանի մը էջնոց մեքենագրուած իրենց ընտանեկան պատմութիւնը: 1700-ական թուականներէն մինչեւ 1920 թուականները, անոնք ապրած են Այնթեպի մէջ, մաս կազմած Բողոքական համայնքին, զբաղած ոսկերչութեամբ, հիւսուածեղէնի արտադրութեամբ եւ ապա, աքսորի ժամանակ, շնորհիւ իրենց բարի վարքին, ճարպիկութեան, ծանօթութիւններուն, լաւ բախտին, կաշառքներուն եւ վերջապէս Անգլիական բանակին, ապահով փոխադրուած Հալէպ, եւ ապա՝ Միացեալ Նահանգներ: Տօթթ. Պերնար Գարամանուկեանը բժիշկ

է, իր քոյրը՝ փրոֆ. Ալին Կիթթորիա Քրիսթընսըն, Սան Տիէկոյի Նահանգային Համալսարանի (S.D.S.U.) առեւտրական նիւթերու դասախօս է: Գարամանուկեան ընտանիքը «խճողուած» է բժիշկներով, ատամնաբոյժներով, դեղագործներով, համալսարաններու դասախօսներով (Տօթթ. Լեւոն Գարամանուկեանը Պէյրութի Ամերիկեան եւ Հայկազեան Համալսարաններու մէջ դասախօս էր):

Շատ գեղեցիկ, եռայարկ մեծ շէնք էր Գարամանուկեաններու բնակարանը: Մաքուր պահուած էր, կոկիկ պարտեզով մը եւ փոքր աւազանով:


Հայաստանի մեջ վտանգուած յուշարձաններու թիւը աւելցած է

Լոռի, Տաւուշ, Վայոց ձոր, Շիրակ, Սիւնիք, Արմաւիր մարզերուն մեջ յուշարձաններու պահպանական գօտիներու բացակայութիւնը կը շարունակէ մնալ գերխնդիր, ինչ որ լուրջ խոչընդոտ է յուշարձանի պահպանութեան համար, երբեմն ալ տեղական ինքնակառավարման մարմիններու ու անհատներու հետ վեճերու առիթ կը դառնար:

Պահպանական գօտիներու բացակայութիւնը լուրջ խնդիր կը յարուցանէ նաեւ իրաւախախտումները արձանագրելու եւ անոնք վերացնելու ընթացքին: Այս մասին բարձրաձայնած են նշուած մարզերու «Պատմամշակութային արգելոց-թանգարաններու եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ-ի ՊՄՊ ծառայութիւններու պետերն ու մասնաճիւղերու վարիչները:

Վերջերս ներկայացուած է Լոռիի, Տաւուշի, Վայոց ձորի, Շիրակի, Սիւնիքի, Արմաւիրի մարզային ծառայութիւններու, «Գլաճորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարանի, «Արփի» բնապատմական արգելոցի, «Չուարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի, «Չօրաց քարեր» բնակատեղի պատմամշակութային արգելոցի ընթացիկ տարւան առաջին կիսամեակի աշխատանքները:

Չեկուցումներուն մեջ առանձնացուած է



վտանգուած յուշարձաններու խնդիրը, նշուած, որ վեց ամիսներու ընթացքին անոնց թիւը աւելցած է:

Մարզային ծառայութիւններու պատասխանատուները խօսած են նաեւ «ՀՀ պետական սեփականութիւն համարուող եւ օտարման ոչ ենթակայ պատմութեան եւ մշակոյթի անշարժ յուշարձաններու պետական ցուցակ»-ի հետ անճշտութիւններու մասին:

Կարգ մը արգելոց-թանգարաններ այս տարւան վեց ամիսներու ընթացքին աւելի շատ այցելուներ ունեցած են, քան նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին:

«Վիքիմետիա Հայաստան» կը շարունակէ բարգաւաճիլ

«Վիքիմետիա Հայաստան» գիտա-կրթական հասարակական կազմակերպութիւնը 19 Յունիսէն սկսեալ իր գործունէութիւնը կը ծաւալէ բարեկարգ ու արհեստագիտական սօրէն լաւ օժտուած գրասենեակի մը մէջ:

Այս ծրագիրը կեանքի կոչուած է աջակցութեամբ «Ինթելեքուալ ռեսուսանս» հիմնադրամի, որուն հիմնադիրն է ռուսաստանաբնակ հայ գործարար Արթուր Չանիբեկեան:

«Ինթելեքուալ ռեսուսանս» հիմնադրամի տնօրէն Յակոբ Յակոբեան լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշեց թէ բացի գրասենեակը կահաւորելու

վերանորոգելէ, իրագործած են նաեւ այլ ծրագիրներ, որոնցմէ են «Մէկ հայ - մէկ յօդուած», «Վիքիակումբներ» եւ ուրիշներ:

«Մէկ հայ - մէկ յօդուած» նախագիծը բաւական մեծ յաջողութիւն ունեցաւ ո՛չ միայն Հայաստանի, այլ նաեւ ամբողջ աշխարհի մէջ եւ նախագծին անդրադարձան միջազգային տարբեր լրատուամիջոցներ: Բայց խօսքը միայն նիւթական ներդրումներու մասին չէ, որ թէեւ բաւական մեծ եղած է, համագործակցութիւնը նաեւ ինթելեքուալ գետնի վրայ էր:

«Այդ համագործակցութեան շնորհիւ հայկական Վիքիպետիա-ի էջին վրայ գետնորդե-

ցան հազարաւոր յօդուածներ, որոնց շնորհիւ Հայաստանի դիրքը բարելաւած է միւս էջերու շրջագծով», ըսաւ Յակոբ Յակոբեան: Իր խօսքերով ներկայիս Վիքիպետիայի մէջ հայերէն յօդուածներու թիւը անցած է 170 հազարի սահմանը: «Վիքիմետիա Հայաստան»-ի տնօրէնուհի Սուսաննա Մկրտչեանն ալ հաստատեց որ ներկայիս Վիքիպետիա-ի հայերէն էջը ունի արձանագրուած 40 հազար խմբագիրներ, որոնցմէ 60-ը կ'աշխատին գործօս կերպով:

Յայտնե՞ք որ բացման մասնակցած էր նաեւ Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան:

ԼՂՀ այցելող զբօսաշրջիկներու թիւը աճած է

Ընթացիկ տարուան Յունուար-Յունիս ամիսներուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն այցելած է 5286 զբօսաշրջիկ, նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի 4353-ի փոխարէն:

Այս մասին «Արցախփրէս»-ի թղթակիցին հետ զրոյցին ըսած է ԼՂՀ արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղար Անի Սարգսեան:

«Այս տարի Արցախի նկատմամբ արտասահմանցի լրագրողներու հետաքրքրութիւնը աննախադէպ է. առաջին վեց ամիսներու տուեալներով ԼՂՀ ԱԳՆ տեղեկատուութեան ու հասարակայնութեան հետ կապերու վարչութեան մէջ լրագրողական հաւատարմագիր ստացած է 100 արտասահմանցի լրագրող, մինչդեռ նախորդ



տարի նոյն ժամանակահատուածին՝ 23», -նշած է Ա. Սարգսեան:

Երեւանի մէջ Հրանդ Տինք...

Շար. էջ 3-էն

ունկնդրութիւնը տեղի կ'ունենայ այդ երեկոյ: Այս բաժնին մէջ իբր մենեթրոգ կը մասնակցին Պոլսոյ Պետական Օփերայի մենեթրոգներ Ալին Աթէշ (սփորանօ), Գեորգ Դաւիթեան (պարիթոն) եւ նաեւ Երեւանէն Պօղոս Եղիազար (թէնոր):

Համերգը տեղ առած է Եղեռնի հարիւրամեակի շրջագծին մաս կազմող ԿՈՄԻՏՍՍ Վարդապետի յիշատակման շաբաթին ելոյթներուն

մէջ: Մաժակ Թօշիկեան ուրախ է թէ առաջին անգամ Հայաստանէն այսպիսի պատուաբեր հրաւեր մը ստացած է եւ հպարտութիւն կը զգայ թէ պոլսահայ յօրինողի մը երգերը պիտի լսուին հայրենիքի մէջ:

Հրանդ Տինք Օրաթօրիօն ծրագրուած է ներկայացնել Յունուար 2016-ին Լոս Անճելըսի մէջ եւ երգահանը կը յուսայ թէ այսպիսի քայլեր օրաթօրիօն կ'առաջնորդեն դէպի ներկայացում մը Պոլսոյ մէջ ալ:

Դէպի Այնթապ...

Շար. էջ 12-էն

Տոբթ. Գարամանուկեանի եւ իր քրոջ ուրախութիւնը եւ յուզումը շատ զգալի էր: Անոնց մեծ հօր շինած ապարանքը հիմա իրենցը չէր: Օրինաւոր եւ բարոյական տերը իրենք էին այդ գեղեցիկ տան, բայց հիմա արտօնութիւն պետք էր անելին թուրք պահակէն որպէսզի իրենց բնակարանը այցելէին... ի՛նչ մտածումներու մէջ էին արդեօք այս ազնիւ մարդիկը: Ինչպէ՛ս լորձնաշուրթն հայիոյանք մը չ'արձակես թուրքին երեսին:

Հայու տունը՝ Թուրք Ազգագրական Թանգարանի վերածուած ի՛նչ հեզնաւք:

Նազարեաններու բնակարանին շէմին վրայ հայկական գիրերով փորագրուած իրենց անունը տակաւին կը մնար: Ներս մտանք: Կոկիկ, բաւական մեծ պարտէզ մը որ սրճարանի վերածուած էր: Հոս ալ մարդիկը հետաքրքիր աչքերով մեզ կը դիտէին: Տան առաջին յարկը զբաղեցուցած էին սրճարանային նպատակներով: Պատերուն վրայ տակաւին յստակ տեսանելի էին հայերէն արձանագրութիւնները, առ Աստուած ուղղուած մաղթանքները: Աստիճաններով բարձրացանք երկրորդ յարկ, որ անգործածելի էր: Երբ մտանք կիսափուլ սենեակները, սքանչացանք պատերուն վրայի ճոխ զարդանկարներով: Տիրապետող գոյնը կանանչորակ կապոյտն էր, «թիրթուրազ», զանազան տեսարանները, բնութեան թէ պարտէզներու մէջ ճեմող զոյգերու, 19-րդ դարու ծիաքաշ կառքերով, շրջանակուած էին նոյնքան գեղեցիկ զարդարանք - գծագրութիւններով: Կը հաւատա՞ք եթէ ըսեմ, որ տակաւին շատ հին եւ շատ գեղեցիկ «ալա ֆրանկա» բազկաթոռներ եւ «սօֆա»ներ կային, փոշիով ծածկուած: Նախկին բնակիչներու նկարները տակաւին պատերէն կախուած էին...: Որպէսզի տանիքը փուլ չգար, քանի մը փայտեայ սիւներ եւ կամարներ գետնորդուած էին հոս ու հոն: Եթէ այդ այնպիսի տերերը քիչ մը խելք ունենային, երկրորդ յարկի այդ սենեակները նորոգելով սքանչելի ճաշարանի կրնային վերածել զանոնք, ուր երիտասարդ զոյգեր կրնային գալ, ճաշել եւ գեղեցիկ մտերմութեան մէջ զիրար «ճաշակել»:

Շրջեցանք Այնթապի հայկական թաղամասերը: Հոս աւերակ տուններու չհանդիպեցանք: Հայապատկան տունները, ոմանք երեք յարկանի, սիւնազարդ, վերանորոգուած էին եւ բնակուած ջարդարաններու զաւակներով ու թոռներով: Իրաւունք չունի՞նք հայիոյելու:

Այնթապը այժմ երկու միլիոն բնակչութիւն ունի: Թուրքերը կ'ըսեն թէ ան արեւելքի Փարիզն է: Թուրքիոյ մէջ անգործութեան թիւը 12 տոկոս է, իսկ Այնթապի մէջ՝ նուազ քան 5: Շնորհիւ Թուրքիոյ նախկին նախագահներէն Թուրքուօ Օզալի, Այնթապի մէջ հիւսուածեղէնի արդիւնաբերութիւնը քաջալերուեցաւ եւ մեծ զարկ ստացաւ եւ շրջանի տնտեսութիւնը շատ յառաջ գնաց: Շատ արդիական քաղաք մըն է ան, լայն ճամբաներով, ծառուղիներով, պարտէզներով, հրապարակներով, բարձրաշարկ եւ գունաւոր, ճաշակաւոր շէնքերով, համալսարաններով եւ մասամբ նորին:

Որովհետեւ 1920-1922 Այնթապի թուրքերը ֆրանսացիներու դէմ կռուելով «յաղթեցին», 1984-ին նախագահ Օզալին կողմէ Այնթապը վերակոչուեցաւ «Կազի Այնթապ», այսինքն՝ «Հերոս Այնթապ» («կազի» հերոս, քաջամարտիկ, կռուող): Ըստ մեր խրիմցի թաթար առաջնորդին, նախագահ Օզալ այդ քայլին դիմած էր շրջանի բնակչութեան քուէները ապահովելու:

Յարգանք, խունկ ու աղօթք Այնթապի հերոսամարտի մեր անմահ հերոսներուն եւ սուրբ նահատակներուն:

ՎԱՐԴԳԵՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ

Desjardins
Caisse de Chomedey

Hrair Ketchedjian, B.A. Écon.
Directeur Général
Représentant en épargne collective pour Desjardins
Cabinet de services financiers inc.

450 688-0900, poste 215
Télécopieur : 450 688-1704

Siège social
3075, boul. Cartier Ouest, Laval (Québec) H7V 1J4
desjardins.com/caissedechomedey

Տիար Օհանես Պալապանեան ջերմապես կը շնորհաւորէ Տոթթ. Արթո ՏԵՄԻՐՃԵԱՆԸ ԶԵՎԵՔԻ ԱՌԱՄՆԱՔՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿԳՈՒԹԵԱՆ գնահատանքի պարգևին արժանանալու առթիւ, եւ մեծարեալին կը նուիրէ Վահան ՏԵՐԵԱՆԻ՝ Էքսպրոմտը:

ԷԲՍՊՐՈՍՏ

Ամպերի նման թող սահեն-գնան
Մտքերը մոլոր,
Ցաւերը բոլոր
Եւ սիրտդ մնա պայծառ յաւիտեան,
Երկնքի նման.
Եւ աստղերի պէս թող միշտ վառ մնան
Երագ ու խնդում
Քո բոցէ սրտում
Եւ ցոլան, ցոլան աստղերի նման
Անմար ու արթուն...
Ու որպէս արեւն արդար ու առատ
Խաւար աշխարհում,
Սիրտդ հրահրուն
Թող ժպտա՛ պայծա՛ռ, ինդո՛ւն, անարա՛տ
Զարին ու բարուն ...

Թիֆլիս 1914

Այս առթիւ տիար Օհանես Պալապանեան «Ապագայ» շաբաթաթերթին կը նուիրէ \$50 տոլար:

Արամ Սրբազան այցելած է...

Շար. էջ 6-Էն



որուն մէջ կը յիշուի, որ Սուրբ շրջանին մէջ բնակութիւն հաստատած Սուրբազան գաղթականներուն թիւը կը հասնի 200 հազարի եւ անոնք կ'ապրին վրաններու տակ: Գաղթականները այդ շրջանը հասած են անցնող Սեպտեմբերին Թուրքիա-Սուրիա սահմանային հատուածներուն մօտ գրանցուող բախումներուն սաստկացումէն ետք: Նշենք, որ Յովսէփ Թովմասեանի եւ անոր եղբայրներուն ընտանիքի անդամներն են՝ Յակոբ, Ֆերուզ, Չարմիկ, Սօսի, Բաֆֆի, Լիանա, Աբիկ, Սերովբ, Բաֆֆի, Շանթ, Մարալ, Մայք, Յակոբ, Աբիկ, Յովսէփ, Էլօ, Վարդուհի, Արամ, Կարօ: Անոնց մանրամասն կերպով պատմած են, թէ ինչ դժուարին պայմաններու տակ հասած են Ուրֆա եւ ապա Սուրիո՛ւ: Յիշեցնենք, որ 46 տարեկան Յովսէփ Թովմասեան սպաննուած էր Քոպանիի մէջ իր որդւոյն 12 տարեկան Արամի աչքերուն առջեւ:

Պիտի հրատարակուի՝ Թուրքիոյ...

Շար. էջ 6-Էն

Վիրապեանի խօսքով՝ կը շարունակուի արխիւային փաստաթուղթերու թուայնացման գործընթացը, որ սկսած է 2010 թուականէն: «Այս տարի թուայնացուել է մօտ 100 հազար փաստաթուղթ, իսկ ընդհանուր՝ մօտ 1 մլն: Իսկ արխիւում պահուող նիւթերի քանակը շուրջ 350 մլն է», - նշած է բանախօսը՝ աւելցնելով, որ առաջնահերթ ուշադրութիւն կը դարձուի մեծ հետաքրքրութիւն յա-

ռաջացնող փաստաթուղթերուն, որոնք են մարդահամարներու տուեալները, մարդոց ծագման, տոհմածառերու մասին նիւթերը, եկեղեցւոյ չափաբերական մատենաները՝ ծնունդ, կնուսք:

Սեպտեմբերին տեղի պիտի ունենայ միւռնի եփման արարողութիւնը, որուն առիթով պիտի հրապարակուին նաեւ Ազգային արխիւին մէջ պահուող բոլոր փաստաթուղթերը, որոնք կը վերաբերին Հայոց եկեղեցւոյ այդ գլխաւոր արարողութեան:

Միւռնի օրհնութեան օրը հին շրջանին տեղի կ'ունենար Աւագ Հինգշաբթի: Վերջին 23 դարե-

րուն՝ այժմեան խմբագրութեամբ կանոնակարգուած «Մաշտոցները» կը հրահանգեն օրհնութիւնը կատարել Աւագ Հինգշաբթի, Հոգեգալստեան տօնին կամ ալ պատշաճ որեւէ այլ օր մը: Հաշուի առնելով, որ օրհնութեան ժամանակ տարբեր կողմերէ մեծաթիւ ուխտաւորներ կու գան եւ նկատի ունենալով Արարատեան դաշտի եղանակային իւրայատկութիւնները եւ համանման շարք մը գործօններ՝ վերջին հարիւրամեակին Միւռնի օրհնութիւնը սովորաբար կը կատարուի աշնան:

PICNIC
B.B.Q.
Dimanche, le 02 août 2015
(à partir de 12h)

PLAT DE BBQ 15 \$

Եկէք ամառնային հաճելի օր մը անցնել «ԹԵՔԵԱՆ ՊՈՒՐԱԿ»ի բարեգարդուած գեղատեսիլ միջավայրին մէջ

MUSIQUE
BACKGAMMON . FOOTBALL

Venez nombreux, en famille et avec des amis
profitez du plein air et de l'ambiance chaleureuse
de notre jardin décoré et ombragé

AU CENTRE TEKEYAN
825 rue Manoogian, St-Laurent

Entrée gratuite

Ծիծեռնակաբերդ այցելեցին Յեղասպանագետներու Միջազգային Ընկերակցութեան 12-րդ գիտաժողովի մասնակիցները




Շուրջ 130 մասնակիցներ աշխարհի 35 երկիրներէ ծաղիկներ տեղադրեցին ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող անմար կրակին մօտ եւ մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին անմեղ զոհերու յիշատակը: Այս մասին կը տեղեկացնէ Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի կայքը:

Երեւանեան համաժողովի մասնակիցները այցելեցին Հայոց Յեղասպանութեան թանգարան, ծանօթացան նոր ցուցադրութեան հետ. շատեր չէին կրնար թաքցնել իրենց յուզումը:

Թանգարանին մէջ կատարած շրջայցեն յետոյ պատուիրակութեան անդամները այցելեցին Յիշողութեան պուրակ, ուր եղեւնի մը տնկեցին:

Agop J. Hacikyan (1931-2015)

It is with great sadness that the family announces the passing of Agop on July 3, 2015, in Montreal. He will be dearly missed by his wife, Brigitte, his brother, Mike, his children, Talleen (Diego), Stephen (Lori) and Patrick, his three grandchildren Pablo, Alexia and Sasha, extended family and friends. He was a distinguished Emeritus Professor of Literary Studies, an academic, a writer, translator, historian, and Dean of Studies at The Royal Military College of Saint-Jean. He is the author of over thirty books on literature and linguistics, and seven novels. In lieu of flowers, donations to Hay Doun or Fonds Jason can be made in his memory.



Requiem Service at Saint Gregory the Illuminator Armenian Cathedral, 615 Stuart Avenue, Outremont, Quebec, Sunday August 9, at 11:00 a.m.

Biography:

Agop J. Hacikyan was born in 1931 in Istanbul, Turkey to Armenian parents. He received his B.A in Humanities from the prestigious Robert College in Istanbul. His years at Robert College marked the beginning of my father's writing career. Following his father's wishes, my father eventually moved to New York to commence an MA degree at Queens College in New York City on his way to becoming an engineer. My father eventually moved to Montreal in 1957 where instead he completed both his MA and Ph.D. in English at the University of Montreal. He credits the beginning of his writing career in part to the famous American-Armenian author William Saroyan who wrote the introduction to my dad's first book *Thomas* and encouraged him to pursue his writing career.

He had a busy career as a university professor, and dean of arts at the Royal Military College of St-Jean and is also the author of over two dozen books, including seven novels (including the best seller *A Summer Without Dawn*), academic works, textbooks, monographs and hundreds of articles written mostly in English and published in Canada, the U.S., Europe, and Turkey. His books have been translated into many languages, including French, German, Spanish, Japanese, Armenian, Greek, Turkish, Rumanian.

His two-year secondment by Ottawa to the United Nations in Geneva, and his appointments as visiting professor of literature and linguistics to the Universities of Geneva, Besançon, and Paris, and his many tours around the world with the National Defence College of Canada gave him the opportunity to get acquainted closely with the international diplomatic, academic and literary circles.

He is an "Emeritus Professor" of Literary Studies, is the recipient of the Commemorative Queen Elizabeth medal for the 125th anniversary of the Confederation of Canada; also decorated by the Republic of France with the medal of La Décoration française Rayonnement culturel, and also by His Holiness Vazken I of Armenia, with the medal of Mesrop Mashtots, and with the gold medal of the Ministry of Culture of the Republic of Armenia for his lifetime work to spread the Armenian culture and literary treasures, and make recognize the Armenian Genocide. In 2009 he was awarded the Movses Khorenatsi medal. The medal is Armenia's highest civilian honour and is presented to individuals by the president of the Republic for their contribution in the fields of culture, arts, literature, and humanities.

ՀՈԳԵՅԱԼԳԱՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ

Խաչիկեան ընտանիքի խնդրանքով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ հոր՝

Ողբ. Յակոբ Խաչիկեան-ի

մահուան քառասունին առթիւ, Կիրակի 9 Օգոստոս 2015-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ:

Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՄԱՅ ՅԱԿՈՒ ՓԻԱՆՏԱՐԵԱՆԻ

Խոր ցաւով տեղեկացանք թէ Լուս Անճելլոսի մէջ իր մահկանացուն կնքած է Ընկ. Յակոբ Փիանտարեան, յետ կարճատեւ հիւանդութեան մը: Ծնած էր Աղեքսանդրիա, 1929-ին: Մասնագիտութեամբ հաշուապահ, ան երկարամեայ անձնուէր ծառայող մը եղած է ՌԱԿ-ի Շրջաւային Վարչութեան ու Գերսամ Ահարոնեան Ակումբի, ԹՄՄ Արշակ Տիգրանեան Վարժարանի, ԹՄՄ Պէշկեօթիւրեան Կեդրոնի խնամակալ վարչութեան, Փետտինա-Կլէստեյլի ԹՄՄ վարչութեան եւ «Նոր Օր» շաբաթաթերթի մէջ:

Ողբացեալին մահը կը սգան իր եղբայրը՝ Պետրոս եւ Անն Փիանտարեան (Նիւ Գրոզի), քոյրը՝ Անահիտ եւ ընտանեկան հարազատներու ու գաղափարակից ընկերներու լայն շրջանակ մը:

Թաղման արարողութիւնը կատարուած է Յուլիս 13-ին եւ աճիւնները ամփոփուած են Rose Hill գերեզմանատան մէջ:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կը խնդրուի կատարել ՀԲԸՄ-ի Փիանտարեան Հիմնադրամին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 24-րդ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝

Հայաստանի Հանրապետութեան

արտակարգ եւ լիազօր դեսպան

Պր. Արմէն Եգանեան-ի

Կազմակերպութեամբ՝

Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան

Ռամկավար Ազատական Կուսակցութեան

Մանրամասնութիւնները յետագային

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տոքթ. Եւ տիկին Արթօ եւ Սոնա Տեմիրճեան, տեր եւ տիկին Աւետիս եւ Արշօ ճիհանեան, առ ի գնահատանք «Je m'appelle GOMIDAS» թատերախաղին՝ Թէքէեան Մշակութային Միութեան Հայ Բեմ թատերախումբին կը նուիրեն 100-ական տոլար:

ՄԱԿԱԳԻՅ

ԳՐԱԴՐՈՒԹ ԹՈՒՎԱԿԱՆ

Հոկտեմբեր 10-11, 2015
«Ապագայ» շաբաթաթերթի
40-ամեակի նշումներ

Կը խնդրուի չխաչաձեւել

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տոքթ. Եւ տիկին Յարութիւն եւ Սիմա Արզումանեան ողբացեալ Դոկտ. Յակոբ Խաչիկեանի մահուան տխուր առիթով «Ապագայ» շաբաթաթերթին կը նուիրեն 50 տոլար:



TEKEYAN CULTURAL ASSOCIATION OF TORONTO

ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Տարեկան Դաշտագնացություն



Կիրակի, 26 Յուլիս, 2015

Sunday, July 26, 2015

COME AND ENJOY

Խորովածի տեսակներ, Համադամ ճաշեր, Անուշեղեններ, Զովացուցիչներ



Bruce's Mill Conservation

Stouffville Rd. (Between Warden Ave & Kennedy Rd.)

SUNNY ACRES SECTION: *Has covered shelter in case of rain.*



All are welcome

For information, please contact Kevork at: 416-666-8944

2105 Midland Avenue, Scarborough, ON. Tel: 416-293-7173

Հայ մարմնամարզիկ Արթուր Թովմասեան նուաճած է առաջին ոսկե մետալը



Հարաւային Քորէայի Կուանկնու քաղաքին մէջ մեկնարկած 28-րդ համաշխարհային ուսանողական մարզական խաղերուն՝ հայ մարմնամարզիկ Արթուր Թովմասեան նուաճած է առաջին մետալը: Այս մասին կը հաղորդէ Artsakhpess.am-ը:

«Հարաւային Քորէայում ընթացող 28-րդ ունիւերսիատայում մենք նուաճեցինք առաջին մետալը՝ մեր մարմնամարզիկ Արթուր Թովմասեանը (օղակներ) նուաճեց ոսկի», - իր Facebook-եան էջին վրայ արձանագրած է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարի խօսնակ Չոհրապ Եկանեան:

Հարաւային Քորէայի Կուանկնու քաղաքին մէջ մեկնարկած են 28-րդ Համաշխարհային ուսանողական մարզական խաղերը: Իրադարձութեան Հայաստան կը մասնակցի 22 հոգի կազմով խումբով՝ 12 մարզիկ, 6 մարզիչ, 2 մրցավար եւ 2 այլ ներկայացուցիչ: Հայաստանի ուսանողական մարզական դաշնութիւնը 1995 թուականէն կը մասնակցի ուսանողական խաղերուն: Հայկական պատուիրակութիւնը պիտի մրցի 6 մարզաձեւերու մէջ՝ սուսերամարտ, ճիւտօ, թաեթունտօ, սփորթային մարմնամարզութիւն, լող եւ թենիս: 28-րդ Համաշխարհային ուսանողական մարզական խաղերը պիտի աւարտին Յուլիս 14-ին: Հայաստանի ուսանողական մարզական դաշնութեան նախագահն է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեան:



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԱՌԱՋ. ԵԿԵՂԵՑԻ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMNATEUR

ՎԵՐԱԾՈՒՆՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ

Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԿԻՐԱԿԻ, 16 ՕԳՈՍՏՈՍ 2015

ՊԱՏԱՐԱԳԻՉ՝ ԱՐԺ. Տ. ՎԱԳՔԵՆ ԲՅՆՅ. ՊՈՅԱԾԵԱՆ

ԱՌԱԻՕՏԵԱՆ ԺԱՍԵՐԳՈՒԹԻՒՆ ԺԱՍԸ 09:30-ից

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԺԱՍԸ 10:30-ից

ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ ԺԱՍԸ 12:00-ից

ՅԱԻԱՐՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹԵԱՄՔ՝ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏԵՐԻ Կ՛ՈՒՆԵՆԱՅ

ԽՈՐՈՎԱԾԻ (BBQ) ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ BAKE SALE Եկեղեցույս դարձեցի՞մ մեջ

Հաւատացեալներէն անոնք, որոնք կը փափաքին փոխան Խաղողի նուիրատուութիւն կատարել կը խնդրենք հեռաչայնել Եկեղեցույս Բարտուղարութիւն (514) 279-3066

ՄԵՆԵԼՈՑ - ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 17 ՕԳՈՍՏՈՍ 2015

Հոգեհանգստեան Պաշտօն առաւօտեան ժամը 10-ին: Չերեզման այցելութեան համար կը խնդրուի հեռաչայնել Եկեղեցույ գրասենեակ՝ (514) 279-3066



Յայտարարութիւն

Այսու կը տեղեկացնենք, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցույ Ծխական Խորհուրդը Օգոստոս 16-էն սկսեալ, որ է Աստուածամօր Վերափոխման Տօնը (Խաղողօրհնէք), կը տրամադրէ Կիրակնօրեայ օթօպիւսի սպասարկութիւն, դիրացնելու համար հաւատացեալներու մասնակցութիւնը Ս. Պատարագներուն:

Մանրամասնութեան եւ արձանագրութեան համար կը խնդրենք հեռաձայնել Եկեղեցույ քարտուղարութեան (514) 279-3066 թիւին:

WWW.KOMITAS.CA
COMPLEXE FUNÉRAIRE
(514) 331-0400

**PRE-ARRANGEMENT 0% INTEREST
MONUMENTS LOCAL AND FROM ARMENIA**

MAINTENANCE SERVICE OF CEMETARIES IN ARMENIA

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Տիար Սարգիս Էփզեան առ ի շնորհակալութիւն «Ապագայ» շաբաթթերթին կը նուիրէ 100 տոլար: